

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐԹԱԿԱՆ : Համագգային ժողովն ի Լոնտոն : Բ. Գ.
 ԸՆԿԵՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ : Կնոջ դերը մարդկային ընկե-
րուծեան մեջ : Տ. ԵՌԿՈՒՑԵԱՆ
 ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ : Օգոստոս ամիս աշակերտաց ամիս : ՍՏԵՓԱՆՈՍ ԵՄՁԶԵԱՆ
 ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ : Փշուր ժողովրդական երգոց (անգլ.) :
 ԱՐՀԵՍՏԱԿԱՆ : Առաքաստաւոր կառք :
 ԱՄԼՐԻԿԱԿԱՆ ԲԱՐՔ : Յ. Կ. ՀԻՆՐՄԻՔ
 ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ : Արտաքին, ներքին :

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ ԵՒ ՎԱԼԱՆՆԵՐՈՒ — տարեկան Կէս ոսկի Օսմ.
 » » վեցամսեայ Քառորդ ոսկի Օսմ.
 Մէկ Թերթին գինն է 60 փարայ
 Օտար քաղաքացի ամար տարեկան 12 Ֆրանք
 » » » վեցամսեայ 6 »
 Թատարութեան ծախք — տարեկան Դան. արծ. 15
 վեցամսայ » » 7 1/2

Մասիսի խմբագրութեան ուղղեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է
 ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս Լրագրաց
 Դպրութիւն, Նորատուրկեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

1884

AVIS.

La Direction de l'Exploitation des Chemins de Fer Orientaux a l'honneur de porter à la connaissance du public que le tarif spécial N° 12 A applicable jusqu'à présent aux transports des céréales à effectuer du 1^{er} décembre au 31 Mars de chaque année, des stations comprises entre Andrinople et Sarembey-Bellova inclusivement en destination de Dédé-aghatch est supprimé et remplacé par le tarif spécial N° 12 B, dont les taxes plus réduites seront applicables dorénavant aux transports sus-mentionnés pendant toute l'année.

Le Directeur de l'Exploitation,
R. HALIN.

Constantinople, le 14 août 1884.

ԱՐԵՒԵԼԵՍՆ ԵՐԿԱԹՈՒՂԵՍՅՈՒՆ

ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ

Ա.Զ.Գ.

Արեւելեան երկաթուղեաց անօրինութիւնը պատիւ ունի ծանուցանել հանարակութեան թէ, թիւ 12 Ա. մասնաւոր ուղեցոյցն որ մինչև ցարդ կը գործածուէր ամեն տարի զեկտեմբեր 1 էն մինչև մարտ 31, Ա.Գ. խաւարայրի Սարամպէյ-Պէլովայէն ուղղութիւնէն Սղաճ ապրանք փոխադրելու համար չնջուած լինելով՝ անոր գործածութիւն 12 Բ. մասնաւոր ուղեցոյցն, որոյ անկէ շուաղ սակագինը այսուհետեւ վերոյիշեալ քաղաքներն ապրանք փոխադրելու համար պիտի գործածուի ահապէս Ընդհ. Տնօրէնութեան (ՍԿ.) ՀԱՅԻՆ

Կ. Պոլիս 14 օգոստոս 1884

VICHY

Վ Ի Շ Ի

Վարչութիւն, Փարէլ 8 Պալատ
Մշտման.

GRANDE GRILE. — Աւշային տկարութիւնը, մարտկական ճանապարհաց հիւանդութիւնը, լեարդի և փայծաղի խնցուի, ներքին դործարանաց խցուի, մաշկային քար և այլն :

HOPITAL. — Մարտկական ճանապարհաց հիւանդութիւնը, ստամոքսի ծանրութիւն, դժուարամարտութիւն, ախորժակի պակասութիւն ստամոքսի, ջղացաւ, անխորտութիւն :

CÉLESTINS. — Երիկամանց և փամփուշտի տկարութիւնը, միզական աւաղ և միզական քար, յօդացաւ, չաքարայտ (Տիապէթ), սպիտակուց — միզական (Ալպիւմինիւրի) :

HAUTERIVE. — Երիկամանց և փամփուշտի տկարութիւնը, աւաղ, քար, յօդացաւ, չաքարամիջութիւն, սպիտակուց — միզական :

Աղբիւրին անունը պէտք է փնտռել չիւշերու քարտիւղին վրայ :

Պոլսոյ ամեն դեղագործաց և դեղավաճառաց քով կը գտնուի :

ԳՈՒՐՆ

Ա.Ն.Գ.Լ.Ի.Ս.ԿԱՆ

ԱՊՍՏՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՇԻ ԴԷՄ

ՌԸԼԻԵՆՍ

Ծովային ապահովագրութիւն : — Դիմել առ գործակաւտարն ընկերութեան, Պ. Ժ. Վ. Ուրիթալ, Եօրկիատիս խան, Պահչէ — գարու, Պոլիս. կամ Ղալաթիա, Ալէքսիատի խան թիւ 15 :

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

33 ԸՏՈՒՄ

1884 ՕԳՈՍՏՈՍ 11

ԹԻՒՆ 3730

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ Ի ԼՈՆՏՈՆ

Հանրային կրթութեան յարակից խնդիր մ'է թէ՛ չափահասներն, որք դպրոցէ ելած են աւելի կամ նուազ թերութ, կամ բնաւ դպրոց չեն տեսած, ի՛նչ միջոցներ ունին կրթութեան, բան սովորելու, իրենց միտքը մշակելու և զգացումներն ազնուացնելու: Կրթութեան այս ճիւղ նուազ կարեւոր չէ քան միւսն: Եթէ՛ դպրոցային սերնդեան ազդեցութիւնը մեծ պիտի լինի ապագային նկատմամբ, ոչ եւս դպրոցային տարիքի մէջ գտնուող երկու սեռէ չափահաս դասերուն ազդեցութիւնը բնականապէս յոյժ մեծ է ներկային մէջ: Աւելի առաջ երթալով պէտք է ըսենք թէ՛, քանի որ ապագայն ներկային տպաւորութեան ներքեւ է, նոր սերնդեան ստացած կրթութեան վրայ զգալի ազդեցութիւն ունի չափահաս սերնդեան կրթութեան աստիճանը, զոր բարեօրէն ուղղակի կը նպաստէ նոր սերնդեան ալ կրթական և բարոյական վիճակին բարւոյնան: Գաղափարաւորութեան մէջ առատ միջոցներ կան չափահաս դասուց դաստիարակութեան կատարելագործման համար ամեն տալարէններու մէջ: Լայնատարր և բազմազան մամուլ մը, աղատ Խորհրդարան մը և հանրային գումարումներ կամ ընթերցանութիւններ ժողովրդեան քաղաքական կրթութիւնը կը կազմեն: Արհեստից ընկերակցութիւնք և գործաւորացի միութիւնք իրենց ժողովներով ու խորհրդակցութիւններով աշխատաւոր դասուց միտքը կը բանաւն նոցա նիւթական շահերուն վրայ, և կը վարդապետեն նոցա անտեսական կրթութիւնը: Գրէթէ՛ ամեն դաս, արհեստաւոր թէ՛ գիտնական, ունի իւր տարեկան դասարաններ, տեղեկագր-

ութիւններ, որք մէն մի ճիւղի առաջգիւ մութիւնը կը հաստատեն կամ կը սլափափան տեն: Զուտ դպրոցային խնդիրներն ալ ստէպ կը դրաւեն հանրութեան ուշադրութիւնը՝ սովորաբար օրէնսդիր ժողովներու աշխատանայ առթիւ: Բայց այս օրերս տեսածք թէ՛ ի՛նչ պէս, արտասովոր առթիւ մը, հանրային դատարարութեան ամենէն ընտանեկան և ամենէն վերացական ու արուեստական խնդիրները մանկ դամայն մեծ ազդի մը միտքն զբաղեցուցին ամբողջ շաբաթ մը, և նոր միտք մը տունէն այն վերադարձ հետաքրքրութեան զոր միշտ պէտք է ներշնչեն այս կարգի խնդիրք:

Նոյն միջոցին որ եզի գտական Բռնֆելտն կը վերջացնէր իւր ազարդիւն նիւտեր, կրթական համագոյն Բռնֆելտն մը կը բացուէր ի Լոնտոն: Մեծ և փոքր ամեն քաղաքակիրթ երկիր, սպասախանութիւն Անգլիոյ հրաւերին, սպասուց կէտ մը համարած էր զրկել իւր նշանաւորագոյն մանկավարժներ: Բայց Կրթական Ժողովը միայն ուսուցիչներէ չբաղկացաւ: Ամեն ազգէ երեւելի գիտնականներ և գրագէտներ ալ մասնակցեցան Ժողովոյն: Ասոնք կրթական զանազան խնդրոց վրայ իրենց ուսումնասիրութեանց, քննութեանց և անձնական գիտողութեանց եզրակացութիւնները ներկայեցին անձամբ կամ զրով: Կրթական նիւթերու վրայ կարգացուած տեղեկագրերն և ճառերը, զորս իրենց կարեւորութեան և հասարակութեան կողմէ գտած ընդունելութեան սխալաւոր ուսանձինն հաստատակել օրոշուեցաւ, ստուար հատոր մը կըրնան կազմել:

Սոյն համագոյն Ժողով չորս ճիւղերու բաժնուած էր: Առաջին ճիւղն զբաղեցնող հարցն էր «Պայմանք առողջ կրթութեան»։ Այսինքն թէ՛ ի՛նչ ուսմանք պէտք է աւան-

դուին և ի՛նչ մէթոտով, որ երկու սեռէ ուսանողք դպրոցական շրջանին մէջ ֆիզիքայէս աւելի զարգանան և ուժովն, քան տկարանան, ինչպէս կը պատահի սովորաբար: Երկրորդ ճիւղն էր «Արուեստագիտական դաստիարակութիւն»։ Այսինքն դաստիարակութեան այն ճիւղն որ թէ՛ ձեռագործ արհեստից և թէ՛ գեղարուեստից կը պատրաստէ ուսանողներն: Երրորդ՝ ճիւղն էր «Ազգականերպութիւն Համալսարանական կրթութեան»։ Այսինքն թէ՛ Համալսարանք և մանաւանդ Անգլիոյ Համալսարանք ի՛նչ յարաբերութիւն պէտք է ունենան երկրին միջնակարգ վարժարանաց հետ, և դարուս պահանջմանց համաձայնելու համար ի՛նչ ուղղութեամբ պէտք է ընթանան յետ այսորիկ: Զորրորդ ճիւղին նիւթն էր «Կրթութիւն և պատրաստութիւն ուսուցչաց և դաստիարակաց»։ Անգլիական երկու նախարարք, որոց իրաւասութեան աւելի կամ նուազ ենթարկեալ է հանրային կրթութիւնը, (1) Լորտ Բառլիսկֆորտ և Պ. Մընտէլա, նախագահեցին ժողովոյն դու-մարմանց:

Այսօր մեր նպատակէ դուրս է մտնել այն դիտական եւ արուեստական մանրամասնութեանց մէջ, որովք լի են այս կրթութեան մշտնադաւանդութիւնք ու խորհրդակցութիւնք: Կրթական շատ խնդիրներ, մանաւանդ երբ համալսարան տեսութեամբ մը քննուին, այսօր նուազ անըլծ և նուազ դժուարալուծելի չեն քան եղիպտական խնդիրն: Եթէ Լոնտոնի Կրթական ժողովն օգտակար հանդիսացաւ, այն պատճառաւ չէ որ իւր հարկերի չափ անդամք, ներկայացուցիչք դաստիարակութեան և մտայն զարգացման յոյժ տարբեր դրութեանց, համիմաստ որոշումներ տուին ամեն յարուցեալ խնդրոց վրայ, իբրեւ նոր Բաբլաֆէն մը ուր որոշումնք ուրիշ կերպիւ չեն կրնար արուել սովորաբար բայց եթէ վերաբանութեանց թերեւս արդարաւոյն հայեացքը զոհելով ֆիզիքական տարրի մը, թուական մեծամասնութեան մը: Կրթական ժողովն օգտակար եղաւ երեք որոշ պատճառներով: Նախ՝ ընդհանրապէս հանրային հետաքրքրե-

րութեան և ուշադրութեան զօրաւոր հոսանք մը գոյացնելով ի նպաստ ժամանակին կրթական խնդրոց: Երկրորդ՝ զանազան երկրներու կրթական դրութիւններն իրենց արդեամբք միմիանց զէմ հանելով և բազմադասութիւն մը հաստատելով, յորմէ բնականապէս յոյժ պիտի լուսաւորուին մտքերն, և երրորդ, ի վեր հանելով կրթական քանի մը երեւելի սկզբունքներ, որք ամեն ազգի համար հաւասար կարեւորութիւն ունին, և կերպիւ իւրիշ Լոնտոնի Կրթական ժողովոյն թողած ընդհանուր ստաւորութիւնը կը կաղմեն:

Այս յիշեմք համառօտիւ այս սկզբանց մի քանին:

Ա. Թէ ժամանակին ողին կը պահանջէ որ մանաւանդ միջնակարգ վարժարանաց մէջ գիտութեանց աւելի տեղ տրուի, աւելի խնամ տարուի, վերադասելով զայնս դըպրութեանց եւ դասական ուսմանց վրայ, որք սակաւաթիւ ընտրեալներու մէջն կուտան զարգացման և բարեկեցութեան միջոցներ:

Բ. Թէ, նոյն սխառտաւ, հարկ է գիտական կրթութիւնը դործնական բնել, մանաւանդ ժողովրդային վարժարանաց մէջ, որպէս զի աշակերտաց մեծամասնութիւնն, իբրեւ դործաւոր, արհեստաւոր, վաճառական և ազատ արուեստից հետեւող, անմիջական օգուտ քաղէ իւր ստացած գիտական ծանօթութիւններէ:

Գ. Կրթական դրութեանց մէջ զանազանութիւնն ինքնին արգելք չէ յառաջդիմութեան: Պաշտօնական միօրինակութիւնը վնասակար կրնայ լինել, տեղական ձեւերէրիցութիւնը ջնջելով:

Դ. Կրթութիւնն, առանց բոլորովին ձրի կամ սխառտաւորիչ լինելու, մեծ առաջդիմութիւն ըրած է Անգլիոյ մէջ, մանաւանդ 1870 էն ի վեր: Կարեւոր բանն այն է որ ժողովրդի մը չափաչափ մասը կամ ծնողները վարժութիւն իրենց զուակաց բարեք կրթութեան անհրաժեշտ պէտքն զգալու, և հանրային ողի մը գոյանայ ի նպաստ կրթական դատին:

Այս և ուրիշ սկզբանց բացատրութեան համար, լաւագոյն կը համարինք մեր ընթերցողաց ծանօթացնել Սիւլվիոյ Ս. Անդրէայ Համալսարանին Տնօրէն և Կրթական ժողովոյ Ատենապետ Լորտ Ռէյլի ընդարձակ

(1) Անգլիա հանրային կրթութեան նախարար չուէր բառին եւրոպական առմամբ:

բանախօսութեան ինչ ինչ մասերն, որով բացաւ Արթական ժողովոյ նիստերն, ակնարկ մը նետելով այն խնդրոց յայտադրոյն վրայ, որք պիտի դառնային ժողովոյն այլ և այլ ճիւղերը:

* * *

«... Եթէ Գլխութիւնն յարատեւ քննութիւն մ'է զմեզ շրջապատող երեւութից պատճառներուն եւ հաւանական հետեւանքներուն, չենք կրնար ուրեմն թոյլ տալ որ քննութեան ոգին քնած մնայ: Բնութեան մէջ գործող ոյժերուն անընդհատ զննութիւնը գլխաւոր տարրն է կրթութեան: Մշտ աճող հետաքրքրութիւն մը դռնացնելու համար գիտողութեան և զննութեան կարողութիւնն աւելցնել՝ բանաւոր կրթութեան ամեն գրգռութեան համար ու նպատակը պարտի լինել: Ամենախոնարհ և ամենաբարձր կոչումներու համար ալ նոյն է կրթութեան դերը: Հողագործը կարող կամ անկարող պիտի լինի ճշգր այն համեմատութեամբ որ լւր գիտելու կարողութիւնը զարգացեալ է կամ ոչ: Բնութենէն ամեն օր բան մը պիտի սովորի, եթէ նախապէս ուսած է գիտել քննութեան գործելակերպերն, և ահա նոյն բանը կրնանք ըսել երեւելի աստղադէտի մը համար ալ: Նախնական կրթութեան մէջ այս ճանապարհութիւն եւս առաւել կը ծանցուի հետզհետէ, և դժագրութիւնը, գիտութեանց տարերքն և ձեռագործներն իրենց պատշաճ տեղը կը բըռնեն ադոր մէջ: Պէտքս ամենայն պօրութեամբ յառաջ կ'ընթանայ սոյն ուղղութեամբ: Երեւելի կը հանդիսանայ Շուէտ ձեռագործի ուսուցման համար, և մեր ուշագրութեան կը ներկայէ ընթանելու արհեստագործութեան նոր տեսակ դպրոց մը: Ֆրանսայի հանրային կրթութեան երկու նախարարներ, Պ. Պաուտու և Պ. Ժիւլ Ֆէրրի, վճռա տուած են ի նպատակ ծայրագոյն կարեւորութեան դժագրութեան: Շուէտ բացառիկ խնամ կը տանի նաեւ մարմնամարզի: Երեք դիտելաց, կարգալ, գրել և հաշուել, մենաշնորհը դատապարտեալ է և գահակալելու վրայ են ուրիշ երեք գիտելիք, դժագրութիւն, մարդանք և ձեռաց ճարտարութիւն: Ըսել չենք ուզեր թէ նախակրթարանը գործարանի մը վերածուի: Մե-

քենական մէթոդներու տեղ բանաւոր մէթոդի մ'ընդունելութիւնը ջատագովելով, կը վախճարէր աշակերտաց մէջ զարթոյցանել այն քննական և զննական ճգնաժամներ, որք շատ տեղ անգղայութեան դատապարտեալ են այժմ, և այսպէս նախակրթարանն ո'չ թէ անհատականութեան վաղահաս գերեզմանը դարձունել, այլ հրապուրիչ և կազդուրիչ վայր մը հանդիսացնել կ'ուզենք թէ՛ մանչերուն և թէ՛ աղջկաներուն համար:

«... Հողագործական կրթութիւնը տեղ տեղ շուայութիւն կը նկատուի: Այս արտասովոր սխալ պարսաւելի է: Անգլիոյ հանրային կրթութեան սլաշտօնատան կողմէ կարգեալ «Արհեստագիտական Արթութեան Յանձնաժողով» իրաւամբ կը յանձնարարէ որ աղիւղային դպրոցաց մէջ, իրագիտական պատշաճ նախապատրաստութեանէ մը յետոյ, հողագործութեան սկզբանց և կիրառութեանց աւանդ ումը պարտաւորիչ լինի, ինչպէս է արդէն յիշատակ, և նիւթական պարգեք յատկացուին հողագործական աշխատութեանց, զորս աշակերտը կատարեն դպրոցներու կից արտերու մէջ: Գիւղական ընկերութեան աւագայն մեծ խնդիր մ'է: Աղարակի մը մշակութիւնը վստահիլ նախապէս հողագործական ուսում չըրած մարդու մը՝ կը նմանի ինքնուրուշ նորաչէն պահաւորին հրամանատարութիւնը ձկնաւուռ մը տղէտ նաւապետին յանձնելու: Վարդէն գրած է թէ գիտուններ հարկ չեն հողագործութեան համար, բայց Էտիմպուրիի Համալսարանն ըմբռնեց թէ այդպիսի պէտք մը կայ թէ մեզ հարկաւոր են ուսեալ աղարակատերէր, ուսեալ վարձակալներ, աղարակաց, ուսեալ մշակներ, ինչպէս կը փնտռենք ուսեալ վաճառականներ, ուսեալ տարագործներ, ուսեալ մեքենաւարներ և ուսեալ արհեստաւորներ: Նոյն տեսութեամբ, Սոր Ջօն Լըպոք իրաւամբ գրած է թէ անտառաբանութեան տարերքը դաս տրուին գիւղային վարժարանաց մէջ:

«Արհեստագիտական կրթութեան միջոցաւ պէտք է վերստանանք Միջին Դարէն ի վեր կորսուած առաւելութիւն մը, երբ, Իտալիոյ մէջ գոնէ, արհեստաւոր մը արուեստագէտ մ'էր միանգամայն: Անիրաւութիւն է շատ պարծիլ մեր դարու լուսաւորութեամբ, երբ այն խաւարչոյն ժամանակներ թողած են արուեստից այնքան

« Դատաւ ճշմարտութիւնն կայ թիւերի խօս-
քերուն մէջ, որ երկիւղ կը յայանէ թէ : » « Երբ
կրօնային համոզմունք տկարացած են ար-
դէն, եթէ հնութեան ուսումն ալ պակսի,
պիտի ունենանք ընկերութիւն մը զօրք ա-
մեն բարոյական կապերէ անցելոյն հետ,
ներկայն մշայն մոտածող, ազէտ, ստորնա-
ցած ընկերութիւն մը, մեքենական ար-
հեստներու մշայն յարմար : » Սէն-Մարք տը
ժիրարտէն ալ գրած է. « Եթէ մեր միաբէն
ժանեմք բոլոր այն գաղափարներ զոր Յոյ-
ներէն և Հռովմայեցիներէն ստացած ենք,
կը զարհուրէմ մտածելով թէ ո՞րչափ քիչ բան
պիտի մնայ : Բայց երբ Քչօտ Պէռնաու,
հիմադրին Ֆրանսական բնախօսութեան
(ֆէռէլեֆէ), Գոլէժ տը Ֆրանսի մէկ խցիկին
մէջ կ'աշխատի և քիմիական գործանոցի
մը բացակայութեան պատճառաւ կրած չար-
չարանքներովը կը կարճեցնէ իւր կեանք,
այս տեսարան նոյնչափ զօրաւոր տարր մ'է
կրթական, որչափ բանասիրական խուզար-
կութիւնն, որոյ շնորհիւ հին խանդարեալ
ձեռագրերը վերահաստատուելու և հասկնա-
լու կարող կը լինինք : Երաւագէտ մը որ հը-
ռովմայական իրաւագիտութիւնն անգիտա-
նայ, աստուածաբան մը որ չէ կարդացած
հին յունարէն Աւետարանն և զեղարուես-
տից վարպետ մը որ գոտական հմտութիւն
չունենայ, թերի կերպով գոտաբարակուած
կը համարուին, ինչպէս ճարտարապետ մը,
երկրաչափ մը և բժիշկ մը՝ դրական գիտու-
թիւններէ զուրկ՝ անպէտ պիտի նկատուէ-
ին : » Ենդէրը կարելիութեան վրայ է : Մեծ
անգլոսարհավար մը մտերոս ըսաւ ինձ թէ իւր
գլխէն խոնդորցած է վերջին 10 տարիներու
մէջ : Ֆրանսացի բնախօս մը սա եպրակա-
ցութեան համար է թէ այն սերնդոց մէջ

որք հօրէ ի դաւակ չարունակ ուղեղ յող-
նեցուցած են՝ դանկն ընդ լայնում մը կրած
է, որ տասն հարիւր մէջ 6 հազարորդա-
մեզը տարբերութիւն պիտի ընէ: Ուրեմն,
ծաւալման կարողութիւնը սահմանափակ է,
և մեզ հարկ է ուսումները ձեռնարկել,
բաժնել: Արնանք այնպիսի յայտագիր մ'ըն-
դունել, որ գլխութեան հետեւողք և ա-
նոնք որ դասական ուսմանց կը հետեւին՝
հասարակ կուսման մ'ունենան հոն, օրինա-
կի համար՝ թէ՛ նոր լեզուներն և թէ՛ պատ-
մութիւնը պարտաւոր չընելով: Պատական
և դրական երկու ճիւղերը միացնելով՝ եր-
կուքին ալ կը միասենք: Երկու ճիւղերուն
բաժանմամբ մ.այն կրնանք միջնակարգ լաւ
կրթութիւն մը տալ՝ մեր ժողովրդեան մը
մեծ մասին. զի այսպէս շատ մը դասական
ուսումներէ ժամանակ կրնանք խնայել:

«Կրթութեան նպատակը պէտք է լինի ոչ
թէ ջլատել այլ զօրացնել անհատն կամքն,
և այրական անկախութիւն մը տալ իւր
բնաւորութեան: Մտային բարձրագոյն մը-
շակութեան օրինակներ անշուշտ կը գտնե-
նենք դասական դպրոցի աշակերտաց մէջ:
Ապերախտութիւն կը լինի չճանչել թէ սոյն
դպրոցի կը պարտէ՝ հրապարակագէտներ
որպէս Նիւման, ատենաբաններ որպէս Ալ-
լատտոն, քաղաքագէտներ որպէս Ադլըն,
քննադատներ որպէս Ջոն Մուլլի, և ինչ Բայց
հեղինակաց, բանաստեղծից և արուեստա-
գիտաց թիւը մշտ սահմանափակ պիտի
լինի: Հին աշխարհի ուսումն անշուշտ կը
հրապուրէ մարդուս ազնուագոյն բնագ-
ղումները. բայց ի՞նչ պիտի ըսենք այնպիսի
եաց որք քիչ մը լատիներէն և յունարէն
ուսնելով, կը դադրին ամեն մտային մշա-
կութենէ, և խմատակներու և անպէտ հը-
ռետորներու գրական գիտութեան (բարե-
բախտ) ստուարացնելու միայն կը ծառա-
յեն: Աղբիւն ստուար մեծամասնութիւնն
ատենաբանելու և հեղինակելու պէտք չու-
նի, այլ գործելու: Հետեւաբար, պէտք է
կրթութիւն այնպէս որ գոհացում տրուի ոչ թէ
հին աշխարհի՝ այլ իւր այժմեան կազմա-
կերպութեամբ նոր ընկերութեան պահանջ-
մանց և միջազգային յարաբերութեանց
արտասովոր ծաւալման: Գրական կամ ի-
րական դպրոցի շնորհիւ է որ գերման պա-
շտօններ կարող կը լինին իրենց լեզուէ դատ

ճ-4 լեզուներով նամակներ գրել, և անգլիա-
ցի պատանեաց դէմ միցելով, կը յաջողին
մտնել մեր վաճառատանց գրասենեակներն ի
Մանչեսթըր և ի Պոմպէ: Միշէլ Շըվալիէ՝ կը-
սէր Արուեստից և տարագաղործութեանց
Աեդրոնական Դպրոցին համար որ ի Բարիզ.
Սա եթէ գոյութիւն չունենար, հարկ կը
լինէր ստեղծել՝ իբրեւ ամբողջացուցիչ մասն
առեւտրական դաշնագրոց»: Այս տեսակ
արհեստագիտական ուսմանց յատկացեալ
դպրոցները մեք յոյժ անտես ըրած ենք,
մոռնալով թէ կրթական դրութեան այս ճիւղ-
ը ժողովրդեան և աշակերտաց աւելի մեծ
մասին օգտակար պիտի լինի քան դասա-
կան դպրոցներն, որոցմէ ընտրեալ փոքրա-
մասնութիւն մը միայն կրնայ օգտուիլ:

* * *

«...Բայց ընդունելով թէ միայն մէկ տե-
սակ միջնակարգ վարժարան չի կրնար լինել,
ինչպէս չի կրնար լինել միայն մէկ տեսակ
նախակրթարան կամ միայն մէկ տեսակ Հա-
մալսարան, կ'ընդունինք ուրիշ մեծ ճշմար-
տութիւն մը, այսինքն թէ՛ կրթութիւնը չի
կրնար կեդրոնացուիլ: Ազգերու, տեղերու
և անհատներու պիտոյք ա՛յնչափ բազմա-
զան են, որ անհնար է միօրինակ օրէնք մը
գծել: Բացարձակապէս անյաջող եղան այն
ջանքեր որոց նպատակն էր կրթութիւնը
մի և նոյն տեսակի վերածել յԱնգլիա, ի
Սլովակիա և յԻտալիա: Գիտէ՞ք ի՞նչ կ'ըսէ
Բառէօն: Այն հարցման թէ, «Ընդէ՞ր
Պրանսա գերագանց մարդիկ չգտաւ վտան-
գի վայրկեանին մէջ», կը պատասխանէ. «Մինչ
Գերմանիա կը բազմացնէր իւր համալսա-
րաններ, և յոյժ փրկառիթ մրցում մը կը
հաստատէր անոնց միջեւ. մինչ անոնց տնո-
ւէններն և ուսուցիչները պատուով կը լը-
նուր. մինչ կը կաղմէր դիտական մեծ գոր-
ծանոցներ լաւագոյն գործիքով, Պրանսա,
յեղափոխութեամբ ջլատեալ, միշտ զբաղ-
եալ կառավարական լաւագոյն ձեւը գտնե-
լու ամուլ վէճերով, կարի ցանցաւ ու-
շաղրութիւն մը միայն կը նուիրէր բարձ-
րագոյն կրթութեան»:

«Հանգուցեալ երեւելին Տիւմա, բարձրա-
գոյն կրթութեան 8 տեսչաց մին, կ'ըսէր.
«Եթէ մեր ազգային ճիւղութեան պատ-
ճառք բազմադիմի կ'երեւին, բայց միայն

մէկ սկզբան կրնան վերածուիլ . վարչային կեդրոնացում, որ Համալսարանի մասին ի կիր առնուեալ, ջլատած է բարձրագոյն կրթութիւնը: Բարիդի Բժշկական Ճեմարանին ուսուցիչ մը, Լոդէն, կ'ըսէր. « Կը պահանջենք ջնջումը Ծրանայի Համալսարանին, և առանձին Համալսարաններու հաստատումը »: Գերմանը չեն կեդրոնացներ. Պերլինի մէջ հանրային կրթութեան կայսերական նախարար չ'այ: Տօլինկէր թոյլ չէր տար որ Գերմանիոյ զանազան Պետութիւնը կրթութեան մասին իրենց ինքնօրինութիւնը կորուսանէին: Ար Լայն Բլէյքէն, ուսուցիչ և երեսօտիսան Էտիմպուրկի Համալսարանին, կ'ըսէ. « Անդիոյ սէս աղատ երկիր մը թոյլ չ'պիտի տայ որ կրթութեան մէջ պետական միակերպութիւն լինի, որպէս թոյլ չէ տուած իւր հանրային քաղաքականութեան օրինակէն ճիւղին մէջ »: Եւ արդարեւ, այն բռնակալութիւն որ մարդկային ցեղը պարտաւորէ մի և նոյն հիմնադրի վրայ կրթութեան ամենուրեք, մարդկային դրութիւն մը չէ ամենեւին: Մեր Կայսրութիւն չի կրնար պահուիլ բայց եթէ ազատ, ասպարէզ տալով կրթութեան ըստ կարի բազմատեսակ մէթոտներու: Եթէ ամեն ազգ ազատ ասպարէզ տայ իւր սլարունակած տաղանդներու զանազանութեան փոխանակ իւր դժարոցները մէկ կաղապարի վերածելու, գանգատ չ'պիտի լսենք այլ եւս թէ նոր տեսակ հանճարներ չեն ելներ . . . »

« . . . Արդի ընկերութեան սէս բաղմանդամ մարմն մը, իւր բազմադիմի պէտքերով, ամեն օր աւելի խառն կազմութեան մը կուտայ կրթութեան: Յաջողութիւնը միայն կեդրոնացմամբ, կամ յայտադրերով, կամ չընթերականներով, կամ քննութեամբ, կամ մինչեւ իսկ ահագին ծախիւք չի կրնար ձեռք բերուիլ: Պէտք եղածն է այն հանրային ոգի, ամեն առն, կեռջ և տղու սըրտին մէջ այն զօրաւոր համոզում թէ՛ կըրթութիւնն առանձնաշնորհում մ'է, թէ մարդ ո'րչափ կրթուի և ուսնի, ա'յնչափ աւելի պիտի յարգուի: Ներկայ դումարման ալ նպատակն է զարգացնել այդ ոգին . . . »:

* * *

Մասն շարաթաթերթի նպատակներէն մին պիտի լինի նպաստել մեր ազգայնոց

մէջ դոյացման սոյնպիսի հանրային ոգւոյ մը: Ո'րչափ ալ խօսուի ի նպաստ բարեփոխման մեր գաւակաց կրթութեան, աւելի լուսաւորեալ ազգաց օրինակը կը ցուցնէ թէ չ'պիտի հասնինք մեր նպատակին առանց միանգամայն կրթելու մեր ժողովրդեան չափահաս դասերն: Անգլիացի հեղինակ մը, Էմէրսոն, գըրած է. « Կը յուսանք թէ օր մը պիտի սովորինք Գաղաքականութիւնը բառնալ և անոր տեղ Կրթութիւնը դնել »: Եթէ քաղաքական մեծ ազգ մը դեռ պիտի սովորի զայս, մեր, որ քաղաքական ազգ չենք, արդէն սովորած պէտք է լինինք: Ծրանայի Ծերակոյտն մէջ կը գանգատուէր անցեալ օր թէ արտաքին խնդրք խորեւ չէր լսնդ լինէն նկատուիլ, որպէս հարկ է, և կուսակցութեանց նախանձընդդէմ հակառակութենէն կը փնտռէին: Եթէ քաղաքական ազգի մը մէջ, ուր ամեն խնդր քաղաքական կուսակցութեանց անընդհատ մրցումով միայն կ'որոշուի, կան խնդրներ որք քանաւորապէս կրնան չէղոր նկատուիլ, ծայրագոյն սխալ մը կը լինէր եթէ մեզ նման ազգի մը մէջ Կրթական Խնդրը զոհ երթար զանազան կուսակցութեանց հակառակութեան:

Բ. Ք.

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹԻՒՆՔ

ԿԱՆԱՆՅ ԴԵՐԸ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Բ.

Բարդյական հաւասարութիւն կանանց. — Իրենց վիճակը հին քաղաքակրթութեան մէջ. — Քրիստոնէութեան ազդեցութիւնը իգական սեռի վիճակին բարեփոխման վրայ:

Խղական և արական սեռերու բարդյական հաւասարութիւնն հաստատուելու համար, « Պէտք չէ բնաւ յուսահատիլ ճշմարտութիւն » թիւնը մոլորութենէ զատելէ. միայն թէ « գարուց յօլովմամբն հաստատուեալ, և նա » « խաղաղարմանց զօրութեամբն ժողովրդ » « եան մէջ արմատացած բիւր գաղափար » « ներն ուղղելով մարդկութեան ծառայելու » « փափաքող անձինք, եթէ ուզեն յաջողիլ, » « պէտք է ջանան իրենց քարոզած ճշմար » « տութիւնը մերկացնել բոլոր այն անպիտորժ

« հետևանքներէն որ զեղծումն միայն կրնայ
« արտադրել (1) » :

Ահա և մեր սոյն պատուէրին հետեւելով,
ճշմարտութիւնը միայն պիտի հետազոտեմք:
Ուստի՝ կ'օնանց բարոյական հաւասարու-
թեան խնդիրն հաստատելու կամ մերժելու
համար, անհրաժեշտ է նախ՝ փնտռել թէ ի՞նչ
է կի՞նն, ի՞նչ գաղափար ունէին նախնի
փիլիսոփայք և ժողովուրդք կանանց վրայ, և
ի՞նչպէս կը վարուէին նոցա հետ :

Թագաւորաց, խնամանդոյնը, Աստուա-
ծային հոգւոյ լուսովն ներշնչեալ, դիւցազ-
նուհւոյ մը նկարագիրն յաւիտենականու-
թեան աւանդել ուզելով, զայն կը նկարա-
գրէ :

« Զօրութեամբ և շնորհօք լցեալ :

« Մեծ գործքերով զբաղեալ առանց ել-
լալու իւր ցեղին պահանջած համետու-
թենէն :

« Բազդին բարեօքն լցեալ, բայց միշտ
պարտաստ զանոնք աղքատաց գոգը լեց-
նելու :

« Աստուածային ահիւն թափանձեալ և
մարդկային փառաց ունայնութեանն հա-
մոդեալ :

« Իւր փառքն հաստատուն առաքինու-
թեան մը մէջ փնտռող, և ոչ թէ դիւրա-
բեկ գեղեցկութեան մը խափուսիկ ճառա-
գայթիցը մէջ :

« Հանդարտ և զուարթ գիմօք մեռած
միջոցին, արժանի ընդունուելու յերկինս,
որ կը ներկայանայ իւր բարեգործութեանց
ընկերակցութեամբ, և բեռնաւորեալ պատ-
ւոյ և շնորհաց դանձերով զորս հաւաքած է
երկրիս վրայ իւր առաքինական գործերովն :

« Արժանի վերջապէս, իւր մահուանէ
ետքը, սոմուսնոյն ցաւոց ու դրուստեացը :
ինչպէս ի կենդանութեան նորա գործունէ-
ու վստահութեանը արժանի եղած էր : »

Բայց յառաջ քան նկարագրելոյ այս արի
և առաքինի կինը, կը ծանուցանէ թէ զբժ-
ուար է զայն գտնելը : Այնպիսի կնոջ մի
գաղափարը կուտայ, որոյ տիպարն կերե-
նայ թէ երբէք չէ տեսած, վասն զի կըսէ :

« Ո՞վ պիտի գտնէ զայն : »

Եթէ պէտք է դիտլ Մարգարէ թագա-
ւորին, երեակայած կինն գտած չըլլալուն

համար գգացած ցաւոցը վրայ, պէտք չէ ան-
շուշտ հետեւիլ իւր յուսահատութեանը, և
պահանջել մարդկային բնաւորութենէն բա-
ցարձակ կատարելութիւն մը :

Անտարակոյս այն կինն որոյ մարդիկ կը
նուիրեն իրենց սիրտը, պէտք է արժանի
ըլլայ ամենայն յարգանաց անտարակոյս
արի կնոջ մը անկեղծ գորովն միայն կրնայ
զմեզ պահել մեր բնական արժանապատու-
թեան մէջ : Նորա հաւանութիւնն է որ
գրեթէ կը մխիթարէ զմեզ միշտ մարդկային
անիրաւութեան դէմ, իբրեւ հատուցումն
այն զոհողութեանց՝ որք ամեն օր կը պա-
հանջուին վեհանձն սրտերէ :

Այս սլաճառաւ է որ սոյն ներշնչող
հրեշտակին մէկ խօսքը, մէկ ակնարկը, մէկ
ծիծաղը մարդկային զգայարանաց կարո-
ղութիւնը կը բարձրացնէ, կաղնուացնէ մին-
չև այն աստիճան՝ որ մեղի կղգացնէ, կը
ճանչցունէ մեր սարսքը, և մինչև իսկ ամե-
նադժուար ձեռնարկութեանց կը մղէ բարե-
գործութեան համար :

Այս ճշմարտութիւնն ամեն մարդ կըզ-
գայ խառնաշփոթ վիճակի մը մէջ, զանոնք
հասկնալէն շատ յառաջ. սակայն տեսնելը
թէ մարդկային ազգը ընդհանրապէս ի՞նչ
կերպիւ ըմբռնած է զայն և ի գործ դրած :

Հին ատենը, որ «Ոսկի Դար»ն է կոչ-
ուի, սէրն միմիայն իւր բնական հրապու-
րանաց վերածեալ էր. հոգեկան և ոչ մի
փոքր յուզումն կը բարեխառնէր զգայարա-
նաց բռնութիւնը. երկուց սեռից ընկերակ-
ցութեանը վրայ որ և իցէ գաղափար մը
չունէին: Երաւամբ, նախնական մարդոց ըն-
կերութիւնն իրենց անասնոց հօտերուն
հետ կրնային բաղդատուիլ: Ոսկեդարեան
կանանց վիճակին վրայ գաղափար մը տալու
համար, բաւական է յիշել Հուսթի և Բաս-
դի ամուսնութիւնը :

Ամուսնոյն առաջին ակնարկին, որ կը
հրամայէ իրեն մօտենալ, Հուսթի նորա ու-
տիցն առջև կը փարի, և երբ յօտին կը
կանգնի, երթալ հորէն ջուր քաշելու հա-
մար է միայն :

Աստուծոյ իրենց տուած ոգնականը,
մարդիկ չուտով իրենց գերին ըրած են :
Աբրահամու ժամանակը կանայք ծախու-
կառնուէին :

« Աճեցէք և բազմացարուք » ի աւանդու-

(1) Ճօն Սթիւարթ Միլ :

թեան հաւատարիմ մնացող իսրայէլացիք անգամ չէին յարդեր զկանայս, ինչպէս որ իրենց օրական աղօթքը կը վկայէ :

« Օրհնեալ լիցիս, ո՛վ Աստուած, արարիչ երկնից և երկրի, որ ոչ ստեղծեր զիս կին » և « Օրհնեալ լիցիս, Տէր, զի ստեղծեր զիս այնպէս որպէս դու կամեցար » : կը կոչէր միւս կողմէն, կինն ընկճեալ :

Ա. Գրոց, ինչպէս նաեւ զիցաբանութեան մէջ, առաջին յանցանքն կնոջ վերաբերեալ է, նա է պատճառ ամենայն չարեաց : Սակայն միթէ աւելի արդարացի չէ՞ր ըլլար այդ ամբաստանութիւնն աւելի առնուղէն, որ զօրաւորագոյնն ըլլալով, նուաճած է զկինն եւ ամենայն զոհողութեանց զնա հարկադրած : Եկեղեցւոյ երկու Հայրապետք այս կարծիքէն են (1) :

Անոնք որ կուզեն իզական սեռի հաւասարութեան դէմ բնական օրինոք մարտնչել, կրնա՞նք պատասխանել թէ նախ՝ Փիլղիզական ոյժն կրթութեան խնդիր մի է. այսչափ բազմաթիւ լարտխաղաց և վայրի կենդանիներ նուաճողներու մէջ չափ անգամ կերեւնան կանայք որ բազմաթիւ այրերէ աւելի գօրաւոր են : Կը տեսնեմք թէ ամեն պատերազմիկ ժողովրդեան մէջ իզական սեռին ոյժը արականէն պակաս չէ. վասն զի կինն է որ կը հերկէ, կը ցանէ, կը մշակէ, տնական սէտքերը կը հոգայ, մինչև իսկ կրակ վառելու համար պէտք եղած փայտը ինքը կերթայ անտառէն կը կտրէ և կը շալկէ կը բերէ : Այսպէս կը վարուէին և կը վարուին տակաւին բոլոր որսորդ ժողովուրդներն : Կանայք են որ արանց որսի գործիքներն և զարկած որսերնին կը չարկեն ու իրենց հիւղերն կը բերեն, մինչդեռ անդին արք, եթէ չեն պատերազմիր կամ որսար, ամենայն դանդաղութեամբ կը նստին :

Այսու ամենայնիւ մեծ սխալ մ'է կարծելն, թէ կանանց այս բացասիկ հպատակութիւնն հին աշխարհի տիեզերական օրէնքն եղած ըլլայ : Մասնաւորապէս Ասիոյ և Արիւիկէի մեծ մասին մէջ տիրած է թէպէտ, սակայն կան տեղեր՝ որոց մէջ կրօնական աւանդութիւնք խիստ քաղցրացուցած են այդ լուծը, և մասնաւորապէս Եգիպտոսի մէջ՝ արանց իրաւունքը չափաւորեալ էր,

ոչ միայն իրենց կնոջ անձին՝ այլ նոյն իսկ ստացուածոցն նկատմամբ :

Մինչդեռ մէկ կողմէն Եգիպտացիք կը քաղցրացնէին կանանց հպատակութիւնը և կը ջանային իրենց ազնկանց միտքն մշակել, անդին Չինացիք, որք ամենէն հին քաղաքակիրթ ազգաց զուխը նշանակուած են, զիտմամբ տգիտութեան մէջ կը թողուն զանոնք : Իրենց տարօրինակ նախանձն եւ չափազանց անվտանգութիւնն արդեւ կը լար կանանց լուսաւորութեանը :

Կը պատմեն թէ երբ Չինացի կին մը հիւանդանար, նորա ձեռաց դատաւիչն մեծ տաքսեայ թեւ մը կը կապէին, որոյ ծայրն բժիշկը կը բռնէր և շնչերակաց բաղման մետաքսեայ թեւին հաղորդած շարժմամբը հիւանդին վիճակը կը քննէր կամ կը գուշակէր :

* * *

Աւելորդ է Ասորոց, Բաբելացւոց և Պարսկաստանի կանանց վիճակը նկարագրել, ուր ընդհանրապէս անարգուած էին կամ ստրուկ : Իսկ ի Յունաստան կը տեսնեմք կինն իւր պայծառ դրից մէջ : Անտաբակոյս Եգիպտական հին բայց կատարեւոր գործեալ քաղաքակրթութեան մէջ է, որ Յունաց բարքն և ընկերական հաստատութիւնք գտած էին իրենց կանանց վիճակն ազնուացնող օրինաց սկզբնատարն :

Եգիպտական օրէնք մը կանանց միայն յատկացուցած էր, կըսեն, ալքատաց եւ հիւանդաց այցելութեան եւ ծերոց ապրուստն հայթայթելու խնամատարութեան պաշտօնն :

Միթէ աւելի մեծ ապացոյց մը կրնար տալ ժողովուրդ մը կանանց սրտին վեհութեանը, որք անմեկնելի վստահութիւն մը կաղզ են ցաւոց եւ թշուառութեանց, որոց երբեք արք չեն կարող հաւասարիլ :

Իզական սեռի ազատադրութեան վիճակը՝ որ Յունաստանի մէջ այնչափ պայծառ կը տեսնեմք, զարմանալի հակասութիւն մը կը սրբունակէ յինքեան զոր չեմք կրնար անտես առնել :

Աթէնքի մէջ, ազնուական համեստ կանայք իրենց բնակարանին մէջ փակեալ, տնական գործոց մատակարարութեամբն միայն զբաղելու դատապարտեալ էին : Որ եւ իցէ կրթութիւն մը ստացած չըլլալով,

(1) Ա. Իււէնէ և Ս. Ամբրոսիոս :

[illegible][illegible][illegible]

դաւակուները, եւ կը հսկէր տան կառավարութեան եւ մինչեւ իսկ ամուսնոյն վրայ, որոյ ոչ միայն իրենեւ խորհուրդ կը հաղորդէր իւր կարծիքն, այլ երբեմն առանց ակնածութեան կը պարտաւորէր զնա հետեւիլ իւր խրատուց :

Ծերունին կատոն դառնապէս կը դանդատէր ըսելով. « Ուրիշ տեղուանք արք են «որ կը հրամայեն իրենց կանանց, իսկ մեր «մէջ կանայք են որ մեզի կը հրամայեն : » Չեմք յուսար թէ ասով դժբերն աւելի վատթարացուցած ըլլան, զի եթէ Հռովմայեցի ժողովրդեան հասարակապետութեան ժամանակի մեծութիւնը նկատողութեան առնուի, չուրացուի թէ կանայք մեծապէս նպաստած են նորա : Շատերուն վեհանձն արժանապատուութեան եւ այրական առաքինութեանց յիշատակներն պատմութիւնն արձանագրած է :

Հռովմայեցւոց մէջ, քանի որ բարուց ազնուութեամբ հասարակապետութիւնը կը յառաջանար, կանայք ի պատուի էին. իրենց հոգւոյն մեծութիւնն ու առաքինութիւնն զօրաւոր արդեցութեամբ կը ներգործէին Հռովմայեցի ժողովրդեան փառաւոր ճակատագրին վրայ : Կօրիօլան, իրաւամբ զայրացած իւր հայրենեաց դէմ, զի նախապէս իւր մօրը ձայնին : Լուքրէս և Քոռնէլիա իրենց դարուն բարուց ուղղութեանը մեծապէս կը նպաստեն : Յուլիոս, որ կը թողու իւր կինը՝ Քլոթիան, ըսելով թէ «կեսարու կինը մինչեւ իսկ կառկածանաց պէտք չէ եսթարկի», ամենէն փառաւոր վկայականն է որ կուտայ Հռովմայեցի տիկնանց համեստութեանը : Բայց ի վերջոյ, կայսերաց ժամանակի բարուց սպականութիւնն զիրենք եւս վատթարացնելով, համեստութեան հետ իրենց զօրութիւնն ալ ի միասին կը կորսնցունեն :

Ընդ հանրապէս հին ազգաց մէջ, կանանց արուած պատիւն զիսլուածական եղած է, կամ բացառութիւն : Հին պատմութեան վրայ հարեանցի ակնարկ մը բաւական է զմեզ համոզելու, թէ ո՞րչափ անցուկ էր կանանց բարոյական հաւասարութեան չըջանակն, զիրենք ամենէն աւելի մեծարող ժողովրդեան մէջն անգամ : Քրիստոնէութեան վերապահեալ էր ազատել իդական սեռը ստորնութեան և ստրկութեան վիճակէն ուր խո-

րատուցած էին զնա մեհենական հաստատութիւնք :

* * *

Աւետարանն ամենայն իրաւանց և ամենայն պարտուց վարդապետութիւնն մէկ մարմնոյ մը մէջ ամփոփելով, բոլոր մահկանացուներն զիրար սիրելու հրաւիրեց : « Եւ «այսուհետեւ ոչ ոյոյ խտիր ի մէջ առն և «կեռջ, այլ ամենեքեանքդ որդիք Աստուծոյ «էք » քարոզելով, երկու սեռին բարոյական հաւասարութիւնը հռչակեց, և զիրենք ճիշտնայն յաւիտեական երջանիւնեան հրաւիրելով, մարդկային ազգի բարոյականն բոլորովին կերպարանափոխ ըրաւ :

Բնական էր որ այս նոր վարդապետութիւնը, որ ամենայն արարածոց հաւասարութիւնը կը քարոզէր, ըստ ամենայնի կանանց համակրութիւնն և հաւանութիւնը պիտի դրուէր : Վասն զի Քրիստոնէութիւնը բարոյական զօրութիւնն ֆիզիկական զօրութեան դէմ կը զինէր, և առաքինութեանց ու բարեգործութեանց օգտակարութիւնն քարոզելով, սիրոյ և անձնուիրութեան հրապուրանօք՝ սրտի ամենէն գոլորտ զգացմանց կը համապատասխանէր : Ուստի կանայք առաջինն եղան Քրիստոսի կրօնքն ընդունող, և նորա տարածման անվեհեր ախոյեաններն հանդիսացող : Անդրիա, Ֆրանսա, Պօնտիփա, Հունդարիա, Բօլոնիա, Ռուսիա և եւրոպական նահանգներէն շատերն, կանանց ձեռամբ ստացան աւետարանն : Եւ միթէ մեծ հանդիսիւ չի՞ տօնէր Հայաստանեայց եկեղեցին Ս. Հռիփսիմեայ և իրեն առաքինի ընկերուհեաց, Գայիանեանց և այլոց յիշատակն, որք այս նոր կրօնքի յաղթանակն ապահովելու համար՝ քաջասրտութեամբ կը կրէին բոլոր տանջանքներն, և արիաբար կը նետուէին բռնութեան յարուցած խարոյկներուն վրայ :

Դիւրին է ըմբռնել այս բարձր անձնութիւնն և այս սուրբ եռանդն՝ կամ աւելին այնպիսի կրօնքի մը համար, որ բազմադարեան գերութեան և չարչարանաց դէմ կուգար իրենց տկարութիւնը պաշտպանել, և ընկերական վիճակին մէջ իրենց աւելի վայելուչ և արժանաւոր դեր մը յատկացնել :

Անտարակոյս այս եղաւ այն տարօրինակ յեղափոխութեան զլիաւոր պատճառներէն մին, որ Քրիստոնէութիւնն յարոյց աշխարհիս վրայ: Հոն է այն տիրապետութեան ոգին զոր կանայք ի գործ պիտի դնէին ի նըպաստ քաղաքակրթութեան, և որ ինչպէս բոլոր քաղաքակիրթ ժողովրդոց՝ նոյնպէս և մեր երկրին վրայ այնչափ համակրելի ցոլացում մը պիտի ունենար:

ՏԻԳՐԱՆ ԵՈՒԼՈՒՅԵԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍ ԱՇԱԿԵՐՏԱՅ ԱՄԻՍ

«Օգոստոս ամիս աշակերտաց ամիս», այսպէս զիտէ Հնդկաց մեծ ազգը: —Չկայ ազգ մը որ այնչափ բարձր կերպով ըմբռնէ որդեծնութեան արդասիրքը, և աշխարհի վրայ յաջորդ թողու պէտքը՝ ինչպէս Հնդկաց բազմամարդ ազգը: Թագաւորէ սկսեալ մինչեւ յետին արհեստաւոր հաւասար կ'ըմբռնեն այս բանիս արժէքը. և ի նոյն վախճան յաջողութեամբ հասնելու համար յօրինած ունին հիմնական ճանապարհներ: Եւրոպական անուանեալ քաղաքայնութեան այն սկզբունքներն որ տնական բարեկազմութեան խաթարող ու ջնջող են, սկսած են քալել նաեւ դէպ ի արեւելեան Ասիոյ կողմերը. բայց Հնդկիք չեղան այնչափ թեթեւ և ունայնամիտ գրկելու այնպիսի ժանտ սկզբունքներ որ իրենց ազդեցին կացութեան տապալիչ են. գիտացին պարսպել զիրենք ընդդէմ այն յարձակմանց որ յանուն քաղաքայնութեան Եւրոպիոյ կողմերէն կը տարածին: Քահանայութեան և զինուորական պատուաւոր դասը՝ ինչպէս նաեւ արհեստաւորը և շինականք, առանց բացառութեան որպէս թէ մեծ հրամանատարութենէ մեկալ կը դիմեն յօժարակամ դէպ ի այն հիմնական սկզբանց, որ իրենց ազգին բազմամարդուն՝ առողջ ու զօրաւոր ըլլալուն և իրենց արժանաւոր յաջորդ պատրաստելու համար էական սպանաններն են:

Հայրը իւր որդւոյն կարգաւ տալու բուն պարտականութիւն կ'զգայ, բայց դպրատան ցուրտ կարգաց տակը ուսմունք կա-

տարել տալու երբէք պարտականութիւն չիմանար. պարտաւորիչ կամբը ազատ յօժարութեան տակը դրուած է. չէնքի մէջ ուսանիլ, ծառի տակ՝ կամ բացօթեայ տեղւոյ վրայ ուսանիլ հաւասար է անոր առջեւ:

Ուսմունք ու գիտութիւն սորվեցնելու համար չունին Հնդկիք մեծ ու սնապարծառն ուսումնարաններ, ուր մի յարկի տակ հազարաւոր աշակերտք խոնին. հասկա ունին բազմաթիւ փոքր դպրոցներ, և յոյժ առաւել ուսուցիչներու թիւ, որ մի մասնաւոր գիտութիւն միայն կ'աւանդեն:

Հայրն է որ ուսուցչի ընտրութիւն կ'ընէ: Ընտրութիւնը կը կախուի հօրը գըտնուած սպանաններէն՝ ու նպատակէն որ կը դիտէ: Չինուորին ըրած ընտրութիւնը՝ վաճառականի, արուեստաւորի, երկրագործի ընտրութեան չնմանիր, և ոչ ասոնցք իրարու: Ուսուցիչը հօրը կամաց պատկերն է:

Երբ տղայ մը յանձնուի ընտրեալ դաստիարակի ձեռքը, հօրը ընելիքը ի կախ կը մնայ. դաստիարակն է որ հօրը տեղը մշտնելով կ'զգենու պարտականութիւն մեծ դէպ ի տղուն ապագայն, դէպ ի նորա ծընողաց գիտաւորութիւն, դէպ ի ընդհանրութիւն ազգին: Այս բազմադիմի պարտականութիւնը են շարժիչ ուսուցչի. զի տունի յաջորդութիւնն ու համբաւը, զի տղուն ապագայ կեանքն ու բարեկեցիկ լինելը բովանդակ իւր ջանքէն կը կախուին:

Որչափ ժամանակ որ ուսուցչի ձեռքին տակը պիտի մնայ տղայն, հայրն ուսման և կրթութեան վրայ հոգ ընելիք չունի, զի ընտիր ձեռքի և խնամոց յանձնուած է որդին. իրեն ուրիշ բան չմտար ընելու, եթէ ոչ հսկել որդւոյն յառաջադիմութեանը վրայ և փութացունել զայն. փութացունել և վարսեալին ջանացողութիւնը: Մեծ սպասւորութիւն կ'ընէ մարդոյն վրայ՝ երբ կը տեսնէ որ վարսեալն և աշակերտն աւելի փութաշնորհութիւն կը ցուցնեն հօրը. բայց աւելի մեծ տպաւորութիւն ընողն այն է որ հայրերն զրեթէ հաւասար եռանդն կը ցուցնեն նաեւ հասարակաբար իրենց ազգին ամեն տղոց ուսանելուն վրայ. անոր համար մի շարունակեալ յորդոր տիրած է ի մէջ ուսուցչաց, ի մէջ տղայոց, ի մէջ ծնողաց. և փոխադարձաբար ամենք իրար խրախուսող են իրարմէ յորդոր առնող են:

կին և դպրոցական կենսոց յարմար, զոր իրենք կամ իրենց վարպետներն յօրինած կ'ըլլան այս տօնի պատեհով. և խումբ խումբ եղած կ'աղարեն և կ'իայթեն ուրախութեամբ: Այս առաջին օրն է որ աշակերտք իրենց վարժապետին ընծայեն կուտան, և իրենք ալ ծանօթներէ ընծայեն կ'ընդունին:

Դպրոցայնոց ուրախութեան փայլ ու շքեղութիւն տալու համար՝ նշանաւոր հրապարակներու մէջ հաստատուած կ'ըլլան արդէն կրկէսի կրթութեան մարդեր, ի պատիւ և ի զբօսանք դպրոցական աշակերտաց. ուր բաձան իրեն արքունիքով, արքայազուք, իշխանաւորք և հարուստք կը փութան երեւիլ, և իրենց երեւմամբ յարգ տալ տօնական հանդիսին ի քաջալերութիւն աշակերտաց:

Ամսոյն հինգերորդ օրը կ'սկսին կրկէսի խաղարկութիւնք և կը տեւեն ինն օր: Խաղերու տեսակներն են հետի ընթացք, կառքով արշաւանք, ըմբիներու բռնամարտ, կռուի, սրահարութեան մրցմունք, գունդով ծեծ և կռիահարութիւն, սուրերու մէջէն ու վրայէն ճախրելով անմիտ անցնիլ, ծանր բաներ շարժել ու վերցունել, ձեռք ձեռքի դէմ մարմին մարմնոց դէմ, բռնանալ, վազերու, յովազներու, արջերու և կոկորդիլոսներու հետ դօտէկիւ: Ամեն կողմէ ժողոված քաջեր իրենց ոյժի՝ ճարտարութեան ու արիւթեան չափը կը ցուցնեն, և թագաւորէն ու իշխաններէն կ'առնուն վարձք:

Մինչև ամսոյն տասնուհինգը աշակերտութիւնն է տիրողը և ամէն տեղ երեւցողը, պատիւներ, գովեստներ և ծափահարութիւններ ընդունողը: Աշակերտք և մանաւանդ նշանաւոր և յառաջադէմ աշակերտք այս օրերուս առիւծներն են, որք շատ կողմէ հրաւերքներ կ'ընդունին, և ժպտալատ:

Այս օրերուս կարծես թէ Հնդկաց երկրին վրայ տիւած կայ փառքի ու խնդութեան պատուաւոր ծածկոյթ մը, որոյ ներքեւ հին Արեւաց հանդարտ՝ վերջը տեսնող զգօն ազգը իւր արժանաւորութեան մէջ և իւր բարձր գգածման գործադրութեանը մէջ կ'երեւին, և Մահարաձայէ սկսեալ մինչև յետին կրտսերը պայծառերեւ կը տեսնուին, և երանական խնդութիւն մը իրենց դիմաց և շրթանց վրայ դժագրած կ'ըլլայ:

Օգոստոսի տասնուհինգով աշակերտութիւնը կը լռէ, մանաւանդ թէ տեղի կուտայ երկրադործաց հանդիսին, յորում ամեն կարգէ հողագործ մէակք իրենց երկրի պլտուղներէն կը բերեն տաճարաց նուիրելու և երկրի արդիւնքն օրհնել տալու: Ասով կ'աւարտի աշակերտաց արարուածք, և վարադոյրը վար կ'իջնայ:

Հնդկաց դպրոցներու մէջ և առանձնականաց մօտ աւանդած դիտութիւններն են անշուշտ համեմատ իրենց ազգին ընդհանուր բարոյականի և կրօնական պահանջմանց, և ըստ պայմանի կենաց իւրաքանչիւր տան յոր կը գտուին: Այս առաջնեալ բանից մէջ միտք արթնցնող և ինձ խօսելու առիթ տուող բանը սա է, որ մեր աշակերտի դասը և դպրոցականութիւնը մէկ ընդհանուր և ազգովին քաջալերութեան կը կարօտի, ոչ միայն աշակերտք հասարակաբար, այլ մասնաւորապէս դպրոցներու յառաջադէմ և ուշիմ աշակերտք, որոց վերայ կեցած է ազգին պատիւը, և որք կարող պիտի ըլլան յետոյ անմիջական կերպով ծառայութիւններ մատուցանել թագաւորութեան Օգոստոսիտ Սուլթանին, և օգտակար անդամներ ըլլալ երկրին:

Երբ ազգին ընդհանուր յառաջադիմութեանը կը փախաքիցը, և այդ բանին համար դպրոցները բարեկարգելու պէտքը կ'իմանանք, հարկաւոր է որ ազգովին աշակերտաց քաջալերութիւն խոստանանք, յարգ ցուցնենք ուսման, և դպրոցականութեան վրայ հսկենք, և ազգովին նոցա յառաջադիմութեան վրայ բերկրինք: Յարգ, հսկումն և բերկրութիւն զոր տեսանեն աշակերտք ազգին կողմանէ, կ'ըլլայ այն իրենց ջանից հարկւրապատկելու երաշխաւորութիւն:

Դպրոցական աշակերտքը ի յառաջդիմութիւն փութացունելու համար կ'երևի թէ ամենէն ազգու հնարն է վարձատրութիւն: Երբ դպրոցական ընթացքը կրկէսի կը նմանցունեմք՝ յորում աշակերտք կը մրցին՝ իրար անցնելու և պսակ յափշտակելու կը ջանան, պէտք է որ վարձուց մրցանակն և հատուցումն իրենց աչաց դիմացը ունենան: Զոր օրինակ, ուսումնական տարւոյ սկիզբէն պէտք է դիտնան աշակերտք, թէ յաւարտ ուսումնական տարւոյ ուսման մեծ Հազա-

րապետն է որ պիտի նախագահէ և զիրենք վարձատրէ. Հաղարապետի բերնէն գոհութեան խօսք մի լսել, անոր ձեռքէն չիւղ մի ընդունիլ և անոր ծանօթանալ, ահա այս է այն տարուան համար աշակերտին յի վարձատրութիւն. զի անոր մէջ կ'սկսի տեսնել իւր անպագայ յոյսերուն կարելի դորձադրութիւնը. իւր երեւակայութեան մէջ աշտարակներ կ'սկսին շինուիլ, և կ'զգենու այնպիսի քաջալերութիւն և յորդոր, զոր ոչ ոք կարող կ'ըլլայ դաւել. — Խտալիայի մէջ գըպրոցներու մի պատուոյ քաղաքում ունենալը այս մեծ առաւելութիւնը ցոյցած է զըպրոցի աշակերտաց վերայ. — Դարձեալ, արքունի բահակին մէջ ի դորձ կոշուիլը, կամ տնտեսական վարչութեան մէջ պաշտօնի հասանելը վարձատրութիւն է Տէրութեան դըպրոցներու մէջ ուսանող յառաջադէմ աշակերտաց. Սորա վարձքն ու հատուցումն իրենց աշաց առջևն ունենալով, ունին նաև ներքին մտրակ մը ինքնին յառաջ մղուելու, քան թէ այն դպրոցաց աշակերտք, որոց ապագայ վարձք կամ վիճակ խոստացուած չկայ. — Չմոռնանք որ այս դարը շահու և վաստակի դար է. Չմոռնանք որ ամենքս ալ աշակերտ եղած ենք, և աշակերտի ներքին և ծածուկ կրից բոլորովին անտեղեակ չենք.

Տարակոյս բնաւ չ'կայ, որ մեր դպրոցականութիւնը ազգովին քաջալերութեան կը կարօտի. — Քաջալերել պէտք է նաև վարձապետութիւնը. զի յայնժամ ուսուցչաց թիւը կը շատնայ, քաջագոյններ հետզհետէ կը յաճորդեն, լաւերն կը նախագասին, կէսգիտուններն կը թօթալին, և դպրոցներն աւելի հաստատուն խորիսխներու վրայ հիմնելու մտածութիւնը չեն ու ամուր կ'ըլլայ.

Երբ աշակերտութիւնը քաջալերելու մեծ խնդիրը խորհրդածութեան սեղանի վերայ դրուի, պէտք կ'ըլլայ քննուիլ թէ, աշակերտութիւնը գորացունելու համար կարելի չ'արդեօք. Հնդկաց օրինակին նման տարեկան հանդիսի օրեր սահմանել ի պատիւ աշակերտաց. — Ալէկ չ'ըլլար արդեօք ազգային դանազան դպրոցներու յառաջադէմ աշակերտք ի մի հաւաքելով մի ընդհանուր քննութեան և միջման ենթարկել և անոնց մէջ քաջագոյններու վրան հայցել Բարձրագոյն տէրութեան բարեգթութիւնը. — Աեր-

ջապէս դպրոցաց ուսմանքներն շատ աւելի յորդորական ընելու համար, և քաջագոյն վարձապետաց թիւն աւելցունելու համար աղէկ չ'ըլլար խորխուսական ընկերութիւն մի հաստատել որ անոնց պէտքը անպակաս ընու և դաւառաց մէջի կարող բայց անտէր և ազքատիկ աշակերտաց կարենայ հարկաւոր եղած քաջալերութիւններն մատուցանելու. — Կոստանդնուպոլսի Հայոց արժանաւորութեանը կը վայելէ դաւառաց ընտիր տղաքը չ'զրկել քաջալերութեանէ.

Աշակերտաց քաջալերութեան խնդիրը շատ կարեւոր նիւթ մի է, որոյ համար Հնդկաց զգօն աղբին տուած դովելի օրինակը այս երրակի հարցմունքն ի հրապարակ դրնելու ինձ սօրիթ տուաւ.

ՄՏԵՓԱՆՈՍ ԵԱԶԸՃԵԱՆ

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Խ Ս Ղ Ե Ր

Կաղնի հունտ մը կառնէք, և ծակելով դիմացկուն թել մը կանցունէք մէջէն և ջրով լի գաւաթի մը վրայ կը կախէք, այնպէս որ հունտը ջրոյ երեսը չօտփէ. Քիչ ատենէն արմատ մը ծլելով ջրոյ մէջ կ'իջնէ, ապա հունտին վերի մասը կը բացուի և



ՋՐՈՅ ԳԱԻԱԹԻ ՄԵՋ ԱՆՏԱՆՈՒ ՄԸ

խորիկ ցողունմը կը տեսնուի երկու փափկիկ տերեւներով, որ ամբողջ ամառը անդադար կաճի.

Անան եղանակին տղաքը դայն պարտիզին մէջ կը տնկեն, ըսելով

— « Թող մեր թողները այս ծառիս շուքին ներքեւ հանդստանան » :

Փ Շ ՈՒ Ր

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳՈՅ

Կ Ա Մ

ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԱՅ

Ա.

Բու՛ւ մի կա՛լաւ ընդդին վրայ՝
 Մէկը հայրս՝ մէկը մայրս՝
 Մէկն աղբարս լմանցուցի,
 Չեռքը բռնեցի տուն տարի,
 Այսին լցի, ձեռքը դողաց,
 Այսինը դունցիս էր չի կտորաւ,
 Գինին լաժակ էր չի թափաւ:

Չային տակը մնացի,
 Ա՛ւ մայրամաս վըլացի
 Էկաւ անցաւ էրէվս
 Տուի չառաւ բարեւ
 Վէ՛լ օր քեզ ափուց հանայ
 Արեւն ու օրը չ'առնա: (Քղի)

Բ.

Մայրամ թոնիք վառեր տնիքը մուխ էր,
 Աւրին ծերուք քաշիքը, ընքերը թուխ էր,
 Մայրսմ մի՛ լար մի լար աշվիդ կ'աւերի,
 Քու աղտի տանողին տնիքն աւերի
 Մայրամ ջատորը զերկեր օրման լեռները,
 Մէկ դին սուրուն կարծա մէկ դին գառները:
 Ըստամպուլու մէջ կար երկու հատ գարեկ
 Խէրէպ ի՞նչ բան ունիս տապիւրկու տարեկ
 Գնա՛, իմ եար, գնա՛ չունես մահանայ
 Քու ծոցը պառկողն էր տէլու տիվանա:

(Քղի)

Գ.

Կաք՛ւիկ հստեր վրայ բարին
 Օր կուլար արցունքն էր արին:
 — Սէ կաք՛ւիկ, ինչո՞ւ կուլաս,
 — Ինտոր չի չամ որ ձաղերս են տարած
 Չաղերս բռնեցին են տարած
 Իմ սիրտս են էրած:
 Ո՛չ գիտեմ ամօթները տարած,
 Ո՛չ գիտեմ հարսնիկն հովը քշած:
 — Սէ կաք՛ւիկ, դուն ո՛ւր տի թառիս:
 — Բանձր խաւսիսին վրայ կը թառիմ
 — Սէ կաք՛ւիկ թէ՛ ատոր տէր քայ, ո՛ւր:
 — Ուռիին ու մորիին վրայ՝ խարսպաս

Կը թառեմ,
 — Թէ՛ հոն էլ չ'իջողն,
 — Կէ՛ծ մը կրակ կըլլիմ
 Էս գիւս կը վառեմ:

(Քարբերդ)

Դ.

Աղկէկ ես, աղկէկ ես, մարբտ կըլմիս,
 Գարնա սիրած մարուն գառը կըլմիս,
 Դոր հասած պաղջուն հառը կըլմիս,
 Ծովուն միջու անգին քարը կըլմիս:
 Կինէ էկաւ գարնայ էրկան օրերը,
 Առնեմ անուշ էարբս էլլեմ լեռները
 Լեռները լեռները պաղ պաղ ջրերը
 Եարբս քոչաւ ինսիզ մնաց իւր տերը:

(Քղի)

Ե.

Բամպակ իմ ցաներ խարբերդու օվան,
 Պիլպուլ, մի՛ փյցներ ետիրուխ ետվան,
 Տուն էկօ, տուն էկօ, իմ եար տուն էկօ,
 Արգաստի պէտքը չէ արեդ առ էկօ:
 Գողնոցս ներկեր եմ կէնճուկ տորոնով,
 Արտիկս լեցեր է գունտ գունտ արիւնով:
 Աղբար աղբիր շինա, ես գամ ջուր խմիմ,
 Ընչվիթ սե քար էրա ես վրան թառիմ,
 Աղբար հերիք պառկիս գարունա եկեր,
 Մուրն ու մանուշակը իրուր խառնըվեր
 Մանա լաշըս, քաշա ջուրը մի նետեր
 Տար գերեզման կապա, դալա կիեր մի ընէր:

(Քղի)

Զ.

Պար խաղալէն խաղալէն
 Մուճկիկս ջուրը տարաւ
 Շատ վաղեցի չի հասայ
 Քիչ վաղեցի չի հասայ
 Տաղարը զերկեց տարաւ
 Մանեցի, մանեցի բարակ մանեցի,
 Էջա խաս պաղջան վարդը քաղեցի
 Լսեցի էարբս կուգայ շապիկ կըլքեցի
 Տո՛ւն էկօ, ցո՛ւն էկօ, էարբս տուն էկօ,
 Արգաստի պէտքը չէ, մինակ տուն էկօ:

(Քարբերդ)


Է.

Առաւօտուն էն ինչ չաղ էր
 Իջեր պաղջան վարդը կը քաղէր
 Պուկունքը շէքէր կը մաղէր
 Էլեր զարթիր անուշ քնուդ
 — Առաւօտուն կուգան ջրեն
 Գանդուր մազով չայ աղջիկներ
 Հայոց աղբին զարդարանքներ
 Էլեր զարդիր անուշ քնուդ:
 Առաւօտուն ցլթեց կարմիր արեւ,
 Էջեր պաղջան քաղէ վարդին տերեւ
 Էկու պաղբիմ քովուն ընչին վերեւ
 Աստուած պահէ քու նշանձի արեւ:

(Քարբերդ)

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ

Նիւ-Եօքքի
Սէ-Երէթէ՛ Ա-
Դրէթէ՛ն գիտա-
կան շարաթա-
թերթին վեր-
ջին թիւերէն
միոյն մէջ նկա-
րագրուած է
Առաջատա-
ւոր կառքը ո-
րոյ պատկերը
կը ներկայա-
ցընենք մեր
ընթերցողաց :
Առաջատա-
ւոր կառքը
ի շնորհս անիւ-
ներու շար-
ժուն անանցը-
ներուն և զէկի
պաշտօն վա-



ԱՌԱԳԱՍՏԱԿԱՆ ԿԱՌՔ

Անօգուտ կը համարինք աստ մանրամասն նկարագրել կառքին կազմութիւնը որոյ մա-
սին պատկերին վրայ տեսնուածէն դաժաւար ստանալ գիտարին չէ :

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԲԱՐՔ

1.—Ներկայ Բաղաւական կազմութիւնն. 2.—Ա-
մերիկայի լրագրաց ընթացքն. 3.—Պալթօյտի ա-
զատութեան արձանն. 4.—Այս տարուան եղանակնե-
րն. 5.—Նիւ-Եօքքի առողջական վիճակն. 6.—Քո-
լորայի երկիւղն. 7.—Ամերիկայի Հայոց վիճակն :

Միացեալ Նահանգաց քաղաքական խն-
դիրն է այժմ, նախագահի ընտրութեան
խնդիրն : Անշուշտ ընթերցողաց ծանօթ է որ
Միացեալ Նահանգաց մէջ երկու մեծ կու-
սակցութիւններ կան . Ռամկալարականը
(Տէֆօլթէթէ) եւ Հանրապետականը (Ռէքէ-պ-
լէ+էն) : Այս վերջինը մեծ զարթոյթեան հասած
էին վերջին քաղաքական պատերազմէն ի
վեր, եւ առաջինը որ գերութիւնն իւր-
եանց մէջ պահելու ծանր յանցանքով կան-
քատանուէին, այժմ այդ արատն բոլորովն
թօթալիւս եւ Հանրապետականը որ « Բա-
րեկարգական կուսակցութիւն » կոչուելու
պատիւն ունեցած էին, այժմ խորհուրդաց,

գրամակրողաց և կաշառակերաց կուսակցու-
թիւն կը կոչուին ո՛չ միայն Ռամկալարա-
կաններէն, այլ նոյն իսկ Հանրապետական-
ներու այն մասէն որ վերջին օրերս բաժ-
նուելով Անկախ-Հանրապետականը (Ինքէ-
թէն+էն Ռէքէ-պլէ+էն) անունն իրեն սեպ-
հականեց : Ինչպէս ծանօթ է՝ վերջին յունիս
8 ին Հանրապետականը ընտրողական ժողով
մը ունեցան ի Չլքալոյ իրենց կուսակցու-
թեան համար նախագահի եւ փոխ-նախա-
գահի ընտրելիներ անուանելու : Սա ըստ
սովորականին կը կազմուի ամեն նահանգ-
ներէ գրկուած պատուիրակներէ՝ որք նահան-
գին Հանրապետականաց թուոյն համեմա-
տաբար կ'ընտրուին, այս անգամ Նիւ-Եօքք
եւ այլ նշանաւոր նահանգներ, որք երկրին
պատուաւոր մասը կը կազմեն, իրենց պատ-
ւիրակներն հրահանգեցին որպէս զի այժմու
նախագահ Պ. Չ. Ա. Արդիւրն անուանեն և
պաշտօնանեն որպէս զի իրենց կուսակցու-

րող զոյգ մը
փոքր անիւ-
ներու՝ ցամա-
քի վրայ կրնայ
կատարել այն
ամեն շար-
ժումները զոր
առաջատա-
ւոր նաւ մը կը
կատարէ ծո-
վու վրայ : Մէկ
մարդ մը կա-
րող է դործա-
ծել զէկն ու
առաջատանե-
րը և մեծ ա-
րագութեամբ
յը պանայ երբ
հովը յաջող կը
փչէ :

Թեան ընտրելի հրատարակուի . բայց իրենց բաղձանաց հակառակ Պ. Ճէմս Կ. Պէյն ընտրուեցաւ որ Պ. Կարֆիլտի ժամանակ արտաքին դործոց պաշտօնեայ էր . բայց Պ. Պէյն ժողովրդեան մեծագոյն մասին համակրութիւնն չի վայելեր եւ իրեն դէմ այլեայլ ամբաստանութիւններ կը յարուցանեն . զայն իբր կառավարութիւնն կողոպտող Բէրուէն եւ Չիլիէն կաշառուող, եւ իւր արտաքին քաղաքականութիւնը Մէացեալ նահանգաց բարօրութեան եւ խաղաղութեան հակառակ կը համարին եւ ի մասնաւորի Անգլիոյ թշնամական : Այս յուզմունքն յարուցանողը այժմ բաժնուած են իբր Անկախը Հանրապետական իրենց կուսակցութեանէն, և կը պաշտպանեն Ռամկավարականաց ընտրելին Պ. Կ. Գլիվելէնտ, որ ընտրուեցաւ յուլիս 12ին ի Չիլիայ : Իր ընտրութիւնն ժողովրդեան համակրութիւնն գրաւած է ի Ռամկավարական կուսակցութիւնն : Ինքն է 47 տարեկան առողջ գէր, և յաղթանդամ ամուրի մը, եւ Նոր Եօքքի նահանգին այժմու կառավարիչն . իր պաշտօնավարութիւնն նշանաւոր ըրած է իր դործնական ընթացքովն որ առանց կողմնակցութեան ողոյ միշտ ուղղ կողմն պաշտպանած է նոյն իսկ ժամուաներովն (Վէնիս), ամեն անգամ որ Օրէնսդրական ժողովն վաւերացած օրէնք մը որ իր հաւանութիւնն չվայելեր՝ կը ժխտէ եւ այս կերպով ստորին յարուցած է իրեն : Տարի մը առաջ Օրէնսդրական ժողովն օրէնք մը վաւերացուց որ փողոցներու վրայ ամբարցած երկաթուղւոյ անցորդներն 10 սէնթէն 5 սէնթի իջնալն կը տրամադրէր : Պ. Գլիվելէնտ մերժեց զայն, առարկելով թէ զայն չինող ընկերութիւնն մեծ զոհողութիւն եւ գումար փառնած է, և թէ չինուին հազիւ հինգ տարի եղած էր, թէ ընկերութեան գնոյն 5 սէնթի իջնելուն վրայ բռնանայն պարզ բռնաբարութիւնն էր և թէ արդէն օրուան առաւօտեան եւ իւրիկուան դործաւորաց երթեւեկութեան վեց ժամերն արդէն 5 սէնթ է, ուստի ցորեկ կամ գիշեր երթեւեկողք կրնան 10 սէնթ վճարել : Ուրիշ օրէնք մը թրամպէյներու ընկերութիւններն կ'արգիլէր որ եւ է անձ ալ խառնել օրն 12 ժամէն աւելի . այս ալ մերժուեցաւ կառավարիչէն առարկուելով

թէ ընկերութիւնն իր վճարումներն պիտի նուազեցնէր իր ժամուց նուազութեան համար : Այս միտումներն որ առողջ մտքի տէր անձանց համակրութիւնն կը գրաւէին ստորին կարգի անձանց՝ եւ կարճ խորհողներու թշնամութիւնն կ'արթնցնէին, որք արդէն Ռամկավարական կուսակցութիւն կը կազմեն եւ մեծաւ մասամբ Իսլանտացոյցն և Գերմանացոյցն կը բաղրանան . այս վերջինք վերջին ծայր դայրացած կ'երեւին Գլիվելէնտի անուանման վրայ . եւ սոցա մի հաստատութիւնն որ կը կոչուի Թէմէնի Հօլ և իրեն գլուխ ունի Ճօհն Քէյլի նշանաւոր Իսլանտացի քաղաքագէտ մը՝ մինչեւ վերջին շունջն դէմ կեցաւ Չիլիայի մէջ Պ. Գլիվելէնտի ընտրութեան, բայց ի դուր . նա ընտրուեցաւ քուէներու առաւելութեամբ . այս ալ ուշադրութեան արժանի է որ Իսլանտացի յեղափոխականը նաեւ Հանրապետականաց կողմն անցած են եւ կը հակառակին Պ. Գլիվելէնտի ընտրութեան :

Այս օրերս լրագրաց ընթացք նաեւ մեծ ուշադրութիւն կը գրաւէ Նոր-Եօքքի մէջ : Հանրապետական թերթ երկու կամ երեք հատ հազիւ մնացած է եւ Պ. Պէյնի պաշտպան միայն հատ մը և այն է, « Թրիպիւն » : Պ. Գլիվելէնտի եւ Պ. Հէնտրիքսի (վերջինը փոխ նախագահի ընտրելի) անուններն իբր նախագահի և փոխ նախագահի ընտրելի կը տեսնուին Մեծն « Հէրալտ » ի խմբագրական սլանակներուն գլուխն, նաեւ ուրիշ գլխաւոր նախկին Հանրապետական թերթերուն վրայ : Չաւելտական « Փքքն » Պ. Պէյն կը ներկայացունէ իբրեւ մերկ մարդ մը, ամբողջ մարմինն հաճիներով լեցուն, որոնց վրայ կը կարդացուին իր քաղաքական յանցանքներն, եւ փոխ նախագահի ընտրելին իբր սեւ շուն մը եւ գերի բռնող մը . զի Ճօհն Ա. Լօկան կը վերաբերէր նախ Ռամկավարականաց : Միւս յագիւրք կը գոչեն զՊ. Պէյն փետրագարդ սեպուհն (Փէթ-ճօյ) եւ ուշադիր են խմանալ թէ լնչպէս եղած է միլիոնատէր մը . միայն 20 տարի կառավարութեան պաշտօնեայ մը ըլլալով, մինչդեռ Պ. Գլիվելէնտ եւ Պ. Հանտրիքս ստիճող Նիւ-Եօքքի մամուլն համակրութիւնն կը վայելեն : Լրագիրք Գլիվելէնտի անցեալն եւ ներկայն կը քննադատեն եւ միշտ հաստատորոտ անբիծ պաշտօնեայ մը ըլլալն կը

հաստատուն : Այս լրագրաց մէջ կը գտնուին նաեւ «Հարբա Ուիլքի» պատկերազարդ շաբաթաթերթին որուն խմբագիրն Ուիլիսոմ ճօրձ Գրիթիս Անկախ Հանրապետականաց պարագլուխն է եւ չի դադրիր Պ. Պէյնի յանցանքներն երեւան հանելով Պ. Գլիվէլէնտի ամբռութիւնը ջատագովել : Վերջապէս Ռամկապարկանք, Անկախ Հանրապետականք, ամբողջ Նիւ-Եօրքի մամուլը մէկ կամ երկու բացառութեամբ եւ Միացեալ Նահանգաց մամուլն քիչ բացառութեամբ միացած են Պ. Կրօք Գլիվէլէնտն իրենց նախագահ եւ Պ. Թոմաս Ա. Հէնտրիքսն իրենց փոխ նախագահ ընտրել զալ նոյեմբեր 7ին, որ ամեն տարի ընտրութեան օր է Միացեալ Նահանգաց մէջ :

Գուցէ «Մասիսի» ընթերցողք պատեհութիւն ունեցած են Պ. Պարթօլտի ազատութեան արձանին վրայ կարդալու շատ անգամ : Արձանն՝ որ այժմ գրեթէ լմացած է Փարիզի մէջ վերջերս արուեստահանդէսի մը մէջ ի տես դրուած էր եւ հաւանական է որ քիչ ատենէն Նիւ-Եօրք պիտի փոխադրուի իբր համակրական ընծայ մը Գաղղիոյ Հանրապետութենէն առ Միացեալ-Նահանգաց Հանրապետութիւնն, եւ պիտի բարձրանայ Նիւ-Եօրքի ծոցին վրայ նայող փոքրիկ կղզւոյ մը վրայ : Արձանին քարայտակ հիմն այժմ լմացած ըլլալով՝ օգոստոս Յին պատուանդանին անկեան քարն պիտի դրոճի հանդիսի : Արձանին խորհուրդն է ազատութիւնը որ կը լուսաւորէ զաշխարհն, ձեռքն ունենալով լուսոյ ջահ մը ամբարձած՝ որ գիշերներն ելեկդրական լուսով պիտի լուսաւորուի : Արձանին բարձրութիւնն ոտքէն մինչեւ ջահւոյն ծայրն 147 ոտք եւ 9 ինչէզ է : պատուանդանն պիտի ըլլայ 83 ոտք որով ամբողջ գործն գետնէն մինչեւ ծայրն 220 ոտք 9 ինչէզ : Գաղղիոյ Բառք Մօնսօի մօտ յատուկ գործարան մը շինուած է, ուր ութը տարիէ ի վեր կը շինուի Մօնսօիդ, եւ ընկ. սրնձի գործարանատեսարց տրամադրութեանց ներքեւ կըսուի թէ որչափ պիւնձագործք կը յառաջանային իրենց գործին մէջ, այնչափ զարմանքնին կը շարժէր իրենց փոքրութեան վրայ երբ քթին ծակերէն կը մոնէին եւ կ'ելլէին : Արձանին մեծութեան վրայ գալափառ մը տունելու

հոմար, եթադրէ աչք մը որ մէկ անկիւնէն միւսն 50 ինչէզ է եւ բարձրահասակ մարդ մը կայնելով արձանին շրթանց վրայ հասկա արտեւանունքին կը հասնի : Կրտուի թէ Պ. Պարթօլտի իր մայրն օրինակ առած է այս արձանին, որ գեղեցկութեան եւ կազմութեան մասին նշանաւոր է եղեր : Վերջին օրերս «Ինիսիկ Թէլէկրամ» թերթին որ «Հէրալտի» մի մասն կը սեպուի՝ պատկեր մը հրատարակած է որով Նիւ-Եօրքցոյ ուշադրութիւնը կը հրաւիրէ որ այս արձանն փոխանակ Պէլլօզ կղզին բարձրացնելու, քաղաքին վարի մասին մէջ եղած Պարթի Բառք ըսուած պարտէզին մէջ բարձրացնեն եւ անոր համեմատ ալ զայն զարդարեն Ամերիկացի եւ Գաղղիացի նշանաւոր անձանց արձաններով : Այս առաջարկութիւն թէեւ չատերն նպատաւոր կը գտնեն քաղաքին, բայց խնդիրն կառավարութեան ներկայացած չէ, Պարթի Բառքն չատ նշանաւոր դիրք մը ունի, քաղաքին ճիշդ վարի ծայրն ըլլալով : Գետին եղերքն Գետը կարտըն չէնքն հոս է, ուր գաղթականք ցամաքն ելլեն որոնց կերպարանքն բաւական են մարդուս զգուանք աղբ ելու : այս պատճառաւ ակորթեի տեղ մը չի սեպուի այցելելու :

Այս տարուան եղանակներն նշանաւոր եղած են իրենց անկանոնութեանց մասին, ձմեռն մերթ իւր սոսկալի ցուրտ եւ մերթ իւր տաք օդերովն եւ ծիւնի ու անձրեւի անկանոնութիւններովն, գարունն իւր փոփոխական ընթացքովն : Այժմ որ ամառ է, անձրեւ եւ ցուրտ հով սովորական բաներ են :

Նիւ-Եօրքի առողջական վիճակն բաւական գոհացուցիչ է բաղդատելով ուրիշ տարիներու, թէեւ այս շաբթու 835 մահ եւ 540 ծնունդ հաշուած է : Մահն մեծ կոտորած կընէ ամեն ամառ քաղաքին վարի մասն, ուր ստորին կարգի Խտալացիք, Խալանացիք եւ Գերմանացիք կը բնակին : Խտալացիներուն աղտեղութիւնը գրջով չի կրնար նկարագրուիլ : այսչափ կըսեմ որ Կ. Պօլոյ մէջ չկայ այսպիսի աղտեղութեալ կամ փողոց : Խալանացիք եւ Գերմանացիք շատ վար չեն մնար :

Գոլէրան թէեւ այս կողմերն այցելած

չէ, բայց անցեալ շարժու ֆիլատելիոյ մէջ հատ մը տեղի ունեցաւ, նաեւ երկու օր առաջ հատ մ'ալ: Սէնթ Լուիզի մէջ ամենախիստ միջոցներ ձեռք կառնուն, որդէս զի Յւրոպայէն հոս քոլէրայի ախտն չբերուի. ամեն շոգեհաւ խստիւ կը բննուի եւ ապա թոյլտուութիւն կըլլայ ներս մտնելու. նաեւ ամեն առողջապահական միջոցներ ձեռք պիտի առնուին մաքրելու քաղաքին աղտեղի մասերն, եւ շատ խառնակներ եւ խլանտացիներ պիտի փոխադրուին իրենց աղտեղի անկիւններէն, որպէս զի ներքին հիւանդութեանց ծագելուն տեղի չի տրուի:

Հայոց վիճակն Մասիսի մէջ շատ անգամ նկարագրուած էն տարրեր չէ. անոնք որ ընտանեօք կը դադրեն միշտ կը զըզլուն: Հոս տեղի երիտասարդաց վիճակն եթէ իրենք կամք ունենան, շատ օգտակար կրնայ ըլլար իրենց, բայց դժբաղդաբար իրենք իրենց դիրքէն օգուտ չեն քաղեր, եւ երբ Ամերիկան կանիծեն շատ անգամ՝ յանցանքն իրենց է: Մինչ երիտասարդ մը հոս ամեն ուսում, գիտութիւն եւ փորձառութիւն կրնայ ստանալ ճրի, իր ժամանակն եւ ստակն կը փածոցնէ, շատ անգամ առողջութիւնն ալ ունայնութեամբ, մոլութեամբ եւ զեղխութեամբ: Սա իրաւ է որ Հայք հոս թէեւ միշտ լաւ անուն հանած չեն, բայց իրենց գործունէութիւնն շատ համբաւ հանած է, եւ շատ Հայեր ալ բարի վարուց եւ անուան արժանիքն կը վայելեն: Բայց ընդ հանրապէս խօսելով՝ Նիւ-Եօքքի Հայք առանձին դիրք մը ունին, որ իրենց յառաջադիմութեան եւ բարօրութեան խոչնդոտն է, եւ զիրենք միօրինակ կը պահէ. այն է կուղան հոս եւ ցամաքն ելած օրերնուն մինչեւ վայն ձգած օրերնին բաց ի իրենց ընկեր դարձաւորներէն ուրիշ մարդ ճանաչելու միջոցն ունեցած չեն: Հոս տեղի Հայերուն վրայ աւելի զրեւ կը խոտանամ ուրիշ պատահութեամբ ապագային:

Յ. Կ. ՀԻԻՐՄԻԻԶ

Ք Ա Ղ Ո Ւ Ա Շ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԱՐՈՑ

4-10 ՕԳՈՍՏՈՍ

ԱՐՏԱՔԻՆ

Վէրսայի Վեհաժողովը, որոյ լուծումը ծանուցինք անցեալ շարժու, օգոստոս 6էն յետոյ յաջորդաբար վեց նիստեր ունեցաւ, յորում ներկայացեալ այլեւայլ բարեփոխիչ առաջարկներ մերժուեցան եւ վիճաբանուեցաւ ծրագրին յօդուածոց վրայ: Վերջին նիստը, որ դումարուեցաւ օգոստ. 14 ին. եօթն ժամ տեւեց տաք սրահի մը մէջ ուր համախմբեալ էին իբր 2300 անձինք: Այդ նիստին մէջ քուէարկուեցաւ վերաքննական ծրագրի ամբողջութիւնը. ներկայից թիւն էր 681. սահմանադրական մեծամասնութիւն 429: Ի նպաստ 309, ընդդէմ 172: Արմատական ձայնակողմ եւ ծայրայեղ ձայնակողմ կոչուած երկու հանրապետական խմբակք ձեռնպահ մնացին. Վեհաժողովը ցրուեցաւ ջերմ վիճաբանութեամբ, եւ երկու ժողովները վերադարձան ի Բարիզ:

Կատարուած սահմանադրական վերաքննութիւնը բաւական անշնչն է: Պ. Ժիւլ Ֆլորի յառաջագոյն պարտաւորուած էր ետ առնուլ վերաքննութեան կարեւոր յօդուածն որ Ֆերակոյտին ելտացոյցի խնդրոց մէջ իշխանութիւնը սահմանափակել կը ձգտէր: Մնացեալ յօդուածք՝ Ֆերակոյտի ընտրութեան եղանակը փոփոխելու, Հանրապետական դրութեան անվերաքննելիութիւնը հաստատելու, իշխանապետներն Հանրապետութեան Նախագահի պաշտօնէն հեռի պահելու եւ խորհրդարանական նըստաչրջանին սկիզբը կարգացուած աղօթքները ջնջելու միայն կը ծառայէին: Վեհաժողովը բնականապէս քուէարկեց այսքան պարզ վերաքննութիւն մը, թէեւ առաջին օրուան կուիւները մինչեւ վերջը տեւեցին: Բայց Պ. Ժ. Ֆլորի իւր մէկ խօստումը գործադրուած տեսնելու բարեբաղդութիւնն ունի: Նոր ոյժ պիտի ստանայ Վեհաժողովոյ յաջող ելքէն, եւ այս պիտի լինի Վեհաժողովոյն մեծագոյն ծառայութիւնն, որովհետեւ նախարարութեանց տեւականութիւնն եւ ամրապնդութիւնը սահմանափակ

վերաքննութենէ մը նուազ կարեւոր բարիք մը չեն Զրաճալի համար :

— Անգլիոյ Խորհրդարանի նստաշրջանը փակեցաւ օգոստ 14ին և սեպտ. 13ին արտասովոր նստաշրջան մը պիտի սկսի՝ յատկապէս ընտրական հանրածանօթ խնդրովն զբաղելու համար : Թագուհւոյն փակման ճառը ցաւ կը յայտնէ ընտրողական օրինաց վիճարանութեան արդեան մը՝ չյանդելու մասին, և կը յարէ թէ օտար տէրութեանց հետ յարաբերութիւնք բարեկամական են . Մեքսիկայի հետ զիւսնադիտական յարաբերութիւնք վերական . Պապուդ օններու երկրին մէջ (ի հարաւային Աւրիկէ) Բրիտանական իշխանութիւնը վերահաստատեցաւ . Թրանսիլանի պատուիրակաց հետ կնքեալ պայմանագիրն վաւերացաւ Պոէրաց աղղային ժողովէն : Հողագործական ոճիրք նուազած են Իռլանտիոյ մէջ : Թագուհւոյն ճառը ցառով կը հաստատէ թէ իրաց վիճակն ի Զուլուստան խանգարեալ և խռովեալ է յոյժ, անգլիական զրաւման ներքեւ գրտնուող փոքր մասէն դուրս . ընտրականութիւն կը յայտնէ երևոյցոյցի քուէարկութեան համար, և այս նստաշրջանի մէջ վաւերացեալ օրէնքներն յիշատակելէ յետոյ, Երկնային նախախնամութեան օրհնութիւնը կը հայցէ երկուց ժողովոց ձեռնարկելիք աշխատութեանց վրայ, վասն բարգաւաճման և աղատութեան ժողովրդեան, և Այսպրութեան մեծութեան :

— Զինաստանի այժմեան նախարարապետ Զոնկ-Լի-Նամէն բողոք բարձաւ տէրութեանց ընդդէմ սմակածման Քէ Լուենի առանց պատերազմական յայտարարութեան և ըսաւ թէ որոշած է դէմ դնել Թրանսայի պահանջմանց : Մովսումբեր կը զետեղուին պաշտպանելու համար զԹանուրի, Զորմուզա կղզւոյն մէջ : Լի Հուենկ Զանկ ամբաստանութեան ենթարկեցաւ չինական առևտրական նաւատորմը պատերազմի երկիւղիւ աւերիկեան ընկերութեան մը վաճառելուն համար :

— Մարդակերութեան սարսափելի լուրեր կը հասնին Ամերիկայէն, Պ. Կրիլի եւ ընկերք՝ որք ի Հիւսիսային Բեւեռ ուղեւորութեան գնացած էին, փետրուար ամսէն ի վեր իրենց պաշարներն սպառած տեսնելով, անօթութեան վերջին ծայրը հասեր և

իրենց ընկերներէն մի քանիին միտը կերեր են : Ասոնց ետեւէն զրկուած ապտտարարք երբ հասան ի Ասպին հրուանդան, տեսան մի քանին ցուրտէ և անսուալութենէ անըզդայ դարձած եւ մին խելագարած երկիւղէն : Խմբին հրամանատար Պ. Շլիի հրամանաւ մեռելոց մօրմինները դուրս հանեցին եւ տեսան որ պատանաց մէջ սպիտակ ոսկորներու չեղձակոյտէ զատ ոչինչ կար, ոսկերաց վրայէն բոլորովին դերձած հանած էին միտն : Պ. Կրիլի մարդիկներէն Զարլլ Հէնրի Գերմանացի մը, անօթութեամբ յուսահատեալ, առիթ գտած էր իւր բաժնէն քիչ մ'աւելի պարէն գողնալու : Այս ոճիր երեւան ելնելով, Հէնրի հրացանի բռնուեցաւ յունիս Յին . երբ մարմինը գտնուեցաւ, իւր ձեռքեր ու դէմք, թէեւ կարկամեալ, ճանաչելի էին, բայց մարմնոյն ուրիշ ամեն կողմն յօշոտուած էին . սովատանջ ընկերք խեղճին սիրտն ու լեւորդն իսկ կերած էին : Այս նողկալի ոսկերտիք Զիլատէլֆիա տարուեցան եւ թաղուեցան ի Պրուքլին : Միացեալ Նահանգաց մէջ մեծ յուզում պատճառեց մարդակերութեան այս գէտը զոր առաջին անգամ Նիւ-Եօրք Թայմը երեւան հանեց, իսկ միւս լրագրաց շատեր կը հերքեն զայն : Պ. Կրիլի եւ իւր մէկ ընկերն եւս կը պնդեն թէ իրենք բնատեղեկութիւն չունին այսպիսի մարդակերութենէ մը : Երեսօր ժողովոյ մէջ հարցում լինելով, ծովային նախարարն յայտարարեց թէ ո՛ր եւ է զեկուցում չէ եղած իւր պաշտօնատան մտրդակերութեան գործին համար : Բայց բժշկական քննութիւնք իրողութիւնը կը հաստատեն . մեռելոց մարմինները գերեզմանէն հանուեցան : Հաւանօքէն խորհրդարանն հրաման պիտի տայ որ կառավարական քննութիւն մը քացուի :

— Դարձեալ սարսափելի լուր մը Ամերիկայէն : Բէնսիլվանիոյ Նահանգին Պրէտֆօրտ քաղաքին ապակիի գործարանի գործաւորք չափազանց պահանջումներ ըրած լինելով, կը ճամբուին եւ նորեր կը բերուին : Նախկին գործաւորք խմբովին կը յարձակին չինքին վրայ, փոխ-Տնօրէն Պ. Ֆոուլիւնէի գլուխը կը պատեն երկաթեայ ձողով մը և ապա աչերը կը փոքեն կը հանեն : Խեղճ մահամերձ վիճակի մէջ է, 16 գործաւորք ձերբակալուած են :

— Օգոստոս 13-ին ի Լոնտոն հրատարակեալ պաշտօնագրէ մը կերեւի թէ 1835-34 եւմոտական տարւոյ մէջ Անգլիոյ կառավարութեան եկամուտներն 83,384,749 ոսկի եղած են, յորմէ հանելով հաւաքման ծախքերն, 71,902, 060 ոսկի զուտ հասոյթ տըւած են: Նախորդ տարւոյ զուտ հասոյթն էր 73,587,558 ոսկի: Իսկ տասը տարի առաջ, 1873—74 տարւոյ զուտ հասոյթ եղած էր 63,169,990 ոսկի:

— Նարոյի Քաղաքապետը նաւահանգիստէն մեծ հանդիսիւ ծովը իջուցին օգոստոս 9-ին իտալական նոր եւ խոշոր գրահաւոր մը 10,000 տոննաւաճափ պարունակութեամբ, Ռէ-ճէէրօ Տէ Լա-Րէա անուն: Մեծ բազմութիւն ներկայ էր: Քաղաքին եպիսկոպոսն օրհնեց նոր գրահաւորը, եւ մըկըրտեց՝ ըստ սովորութեան՝ ծովակալ Պ. Աքդոնի դուստրը, չիլ մը գինի թափելով գրահաւորին կողին վրայ:

— Ֆրանսայի երեսփոխանական ժողովն 182ի դէմ 350 ձայնիւ քուէարկեց Թոնքինի համար խնդրուած վարկն եւ կառավարութեան վրայ վստահութիւն յայտնող օրակարգ մը ընդունեց, 50ի դէմ 173 քուէիւ: Խորհրդարանի նախաընթանը փակուեցաւ:

— Աննամը նոր թաղաւորին թաղաւորութեան հանդէսը կատարուեցաւ օգոստոս 17-ն մեծ շքով ի Թիանան, ի ներկայութեան Ֆրանսական իշխանութեանց: Աննամի վախճանեալ թաղաւորը բնական մահուամբ չէ մեռած: Ֆրանսացոց հակառակ եղող Մանտարինը թունաւորած են զնա: Այս դէպը Հիւէի մէջ բաւական խռովութիւն պատճառեց:

— Պերլինէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ Գերմանական թնդանութակը չողենաւ մը զորք հաներ է ի Պակէյրա (Կուինէա), խլեր վերուցեր է Անգլիական դըրօշակն եւ Գերմանական դրօշն պարզեր է:

— Հոնկ-Քոնկէն օգոստոս 13 թուով կը հեռագրեն առ Թայբէ թէ Չինական կառավարութիւնը պատերազմի հրաման հաներ է ընդդէմ Ֆրանսայի:

Լոնտոնի ուրիշ թերթերը խառնապէս կը ցուցնեն Թայբէի այս լուրը:

— Շաբթուս լրերէն քաղուած չենք ըներ Եգիպտական խնդրոյն վրայ, որ նորէն բացարձակապէս արգիլուեցաւ սեղական մտայն:

Ն Ե Ր Ք Ի Ն

Վեհ. Սուլթանին հրամանաւ, քաղաքապետական պաշտօնատան վերին յանձնաժողովն որոշեց 200ական ոսկւոյ նպաստ զըրկել Սէրէզի, Մարաշի եւ Մարմարայի հըրկիղերոց: Կայսերական դանձուս պաշտօնատան կողմէ եւս 100,000 զրուշի պարէն պիտի զրկուի:

— Դատական նախարարութեան որոշմամբ, մայրաքաղաքիս բոլոր դատարանք 5 ամիսն մը անգամ մանրամասն վրձակագիր մը պիտի պատրաստեն, ցոյց տալով թէ այդ միջոցն մէջ քանի դատ ներկայացեր է, քանի աւարտեր եւ քանի ուղակի լըմնայ:

— Թուրքիոյ հողին վրայ գտնուող կամ գտնուելիք հանքային ջուրերը կառավարութեան ստացուածքը պիտի նկատուին այսուհետեւ, եւ անոր ձեռամբ պիտի շահագործուին:

— Բ. Դուռը կրկին շրջաբերականաւ մը հրաւիրած է գաւառական իշխանութիւնները որ մարդահամարի գործողութիւնները վստայեն:

— Առեւտրական եւ երկրագործական նախարարութեան ձեռամբ, անասնաբուժութեան վարժարան մը կը բացուի այս օրերս:

— Տարաւնէլի Չամ Պուրնու ըստած տեղը գինուորական հիւանդանոցի մը հիմնարկութեան հանդէսը կատարուեցաւ յուլիս 30-ին:

— Երկրագործութեան եւ վաճառականութեան նախարար Սուպհի փաշա շրջաբերականաւ պատուէր զրկեց գաւառները որ ամեն խնամ տանին վայրի ձիթենիները մշակելու եւ պաշտպանելու համար:

— Թղթատարական վարչութիւնն հետամուտ է Կ. Պօլոյ եւ Վիլնիայի միջեւ թղթատարական աւօրեայ երթեւեկութիւն մը հաստատուել ցամաքի ճամբով:

— Առեւտրական նախարարութեան ձեռամբ ի մօտոյ կ'ստանայ հանդէս մը պիտի հրատարակուի Թուրքերէն լեզուաւ, միմիայն առեւտրական խնդրոյ յատկացեալ:

— Քոնստան 6 ժամ հեռաւորութեամբ աւազակներն 2500 ոսկւոյ արժողութեամբ ալ ին յափշտակեր են, որք իլմիր վաճառականի մը կը զրկուէին:

— Վեհ. Սուլթանն, հրամայեց որ Ռոտտսթոյի Զօրու գաւառակին թւարկէ-Տէրէ ըստած տեղը՝ որ կայսերական կալուածնէ-րէն է, ամեն տարի Օգոստ. 13ին տօնավա-ճառ (բանայիր) բացուի, Վէլի-Մէշէ ան-ուամբ, ի շահ հասարակաց: Տօնավաճառին տեղին համար, կայսերական անձնական գանձէն բազում դրամ տրուելով, չուկայի նոր ձեւով գեղեցիկ շէնքէր կառուցեալ են, և ի դիւրութիւն փոխադրութեան՝ երկաթուղի հաստատեալ է մինչեւ տօնավաճառի չուկայն:

— Մարաշի հրդեհին վրայ տրուած վերջին տեղեկութեանց նայելով՝ հրդեհը Սիմիթճիի փողոէ մը ծագեր է. 1000ի չափ խանութ, 240 տուն, 3 մկիթ, 2 պանդոկ, 1 բաղնիք, 1 զօրանոց և թաղապետութեան պաշտօնատունն հրոյ ճարակ եղեր են. բոլոր փկան 150 հազար Օսմ. լի-րա կը հաշուեն: Ժողովուրդը վրաններու ներքեւ ապաստանած է:

— Բաղէշի հայ եւ թուրք վաճառակա-նաց եւ Ղուլթիք գիւղաքաղաքացւոց կողմանէ, նահանգին նորընտր կուսակալ Վըսեմ Խէքի փոշայի բարւոք պաշտօնավա-րութեան համար շնորհակալութեան ուղերձ մը մատուցաւ նորին կայսերական վեհա-փառութեան:

RÉGIE CO-INTÉRESSÉE

DES TABACS

DE L'EMPIRE OTTOMAN.

Constantinople, le 14 Août 1884.

AVIS.

Il est arrivé à la connaissance de l'Administration de la Régie que des négociants en tabac se dispensent de l'accomplissement de certaines formalités prescrites par les règlements en vigueur en effectuant leurs envois de tabacs en feuilles en pays étranger et notamment en Angleterre. En conséquence le public est avisé que les exportateurs de tabac devront dorénavant se conformer strictement aux dispositions de la loi, d'après lesquelles il est nécessaire de se munir de certificats

définitifs. « Sont seuls définitifs les certi-
« cats qui constatent, soit l'acquittement
« des droits de consommation, soit la re-
« mise de la marchandise aux fabriques
« ou aux débits de tabac dans le pays,
« soit enfin la reexpédition des tabacs du
« premier lieu d'arrivée à un autre point
« des pays étrangers par terre; comme
« tels ils serviront à la levée des cautions
« fournies par le négociant au moment
« de l'exportation du tabac qui fait leur
« objet. » (Règlement sur les Tabacs,
Art. 31).

Constantinople, le 21/31 juillet 1884.

LA DIRECTION GÉNÉRALE.

ՄԵԱՆՈՏԻ ՇԱՆԱԿՑԱԿԱՆ ԲԷՃԻ
ԹՈՒՐԿԻՅՈՅ

ԱԶԴ

Բէճիի վարչութիւնն խնայած լինե-
լով որ ծխախոտի վաճառականները
գործադրական կանոնադրութեանց պա-
տուիրած բանի մը ձեւակերպութիւն-
ները կատարելէ կը խորշին, և ծխա-
խոտի տերէ կը զրկեն օտար երկիրներ,
մօնաւանդ յԱնգլիա, կը ծանուցանէ
հասարակութեան թէ այդ վաճառա-
կաններն այսուհետեւ պարտին ճշդիւ
համակերպիլ օրինաց տրամադրու-
թեանց, որոց համեմատ պէտք է վերջ-
նական վկայագրեր ունենան ի ձեռին:
« Վերջնական են այն վկայագրերն, որք
կը հաստատեն կամ սպառման տրոց
վճարումը, կամ ապրանաց յանձնուիլն
երկրին ծխախոտի գործարանաց կամ
վաճառողաց, և կամ վերջապէս հասած
առաջին վայրէն ուրիշ օտար երկիրներ
ցամաքի ճանրով ծխախոտի զրկուիլն,
և իբր այն՝ այդ վկայագիրք պիտի ծա-
ռայեն բառնալ այն դրամը, զոր վա-
ճառականք իբր ապահովութիւն տուած
են ծխախոտին արտածութեան պա-
հուն: »

(Կանոնադր. Ժիւլիոսի շրջ. 31)

Ընդ. Տնօրէն-Էիւն

Կ. Պօլիս 19 31 յուլիս 1884

Արտօնատէր

Կ. Ս. Իիթիիճեմն

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՆԵԼԻ ԼՐԱԳՐՈՅ